

Լուսինե Ավետիսյան

325

612

23
23

ՀԱՅԵՐԺԱՄԱՆՈՒԿԸ



ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՄԱՆ



ՀԱՎԵՐԺԱՄԱՆՈՒԿԸ

ԵՐԵՎԱՆ 2008

**Համակարգչային շարվածքը
ձևավորումը
սրբագրումը՝**

L. Ավետիսյանի

**Շապիկի երկրորդ էջի գրաֆիկան՝
իգոր Մաղյանովի**

Առաջին էջի լուսանկարում՝ Լուսինե Ավետիսյանի «Փոքրիկ իշխանի կարոտը» մանրաքանդակը:

Ավետիսյան L.

Հավերժամանուկը: Եր.: :

Հեղինակային իրատարակություն, 2008: 98 էջ:

Գիրքը նվիրված է Անտուան դը Սենտ-Էքսյուաերիի «Փոքրիկ իշխանը» հեքիաթի թաքուն շերտերի բացահայտմանը: Հեղինակը թվաբանական, բանասիրական, բնական գիտությունների, առասպելաբանական, հոգեվերլուծաբանական գիտելիքների համադրմամբ նրբորեն բացում է առաջին հայացքից աննկատելի բազմաթիվ հանգույցներ՝ սկզբից մինչև վերջ ընթերցողին պահելով հետաքրքրության ու հիացմունքի պարուրած ծիրում:

Հատվածաբար տպագրվել է «ՈՒրբաթ» շաբաթաթերթի 11-20 համարներում:

Նվիրվում է «Փոքրիկ իշխանի» ծննդյան **66**-ամյակին:

ՄՈՒՏՔ

«Փոքրիկ իշխանը» այն ստեղծագործություններից է, որ մեծ հավշտակությամբ կարելի է վերընթերցել ու չձանձրանալ: Սա մի երկ է, որ ստիպում է իրեն վերիիշել ու նորից կարդալ՝ վերապրել տալով գեղագիտական այն հաճույքը, որ պատճառել է նախկինում: Բայց զարմանալիորեն այդ գեղեցիկ գիրքը վերաբացողն իր համար գոնե մեկ նոր բան է հայտնաբերում այնտեղ:

«Փոքրիկ իշխանը» համապարփակ հեքիաթ է՝ բազմանիստ ու բազմախորհուրդ: Փոքրիկ հերոսի կերպարը որպես մանկության այլաբանական պատկեր ներկայացնող և նրա պարզ ու մեծ ինաստնությունն ամփոփող այս գործը դժվար է նույնիսկ միանշանակորեն հեքիաթ համարել: Սա ներքին ու արտաքին կառուցներով միանգամայն ուրիշ, սեփական օրինաչափություններն ունեցող երկ է:

Ամեն անգամ գիրքը ծեռքս առնելով՝ հարցնում են ինքս ինձ, թե որն է գաղտնիքը, որ այն երբեք չի սպառում իրեն, ու միշտ կարելի է կարդալ ինչպես առաջին անգամ, որն է գաղտնիքը, որ այն անդառնալիորեն կախարդում է:

Գաղտնիքը կամ գաղտնիքների շղթան, որ առեղծվածային լուսով է օժտում գիրքը, գուցե թաքնված է այնտեղ, որտեղ ամենից քիչ ենք սպասում տեսնել:

Թեև առաջին հայացքից հեքիաթում շատ բան պատահական է թվում, սակայն, «Փոքրիկ իշխանի» պայմանական աշխարհում որևէ պատահական բան չկա:

Ոչ պատահական և այս հեքիաթի համար անհրաժեշտ տարր է նախապատմությունը՝ հեղինակի մանկության ամենակարևոր շրջանում՝ անհատականության ձևավորման պատասխանատու պահին, մեծահասակների պատճառով՝ հրաժարումը «նկարչի փայլուն

ապագայից»¹: Ամենաանհրաժեշտ ու բավարար պայմաններում էր ապրում Փոքրիկ իշխանն իր մոլորակի վրա: Պատահական չէին նրա այցելությունները հարևան մոլորակներ, որոնց վրա նույնպես անհեթեթ, բայց հեքիաթի իրականության մեջ բավարար պայմաններում ապրում էին հերոսները: Դարձյալ պատահական չեն անապատը, օձը, աղվեսը: Սովորական նկարներ չեն նաև գործի հեղինակային նկարները. առանց դրանց՝ շատ բան կմնար չասված: Անգամ առատորեն օգտագործված, խիստ երկրորդական թվացող, բայց այնքան անփոխարինելի ու անհրաժեշտ թվերը հեքիաթի արտաքին ու ներքին կառուցվածքները միմյանց ամուր կապող տարրեր են:

Այս աշխատությունն ամփոփում է մի շարք հարցերի գտնված պատասխաններ, որոնք, համոզված եմ, անչափ կիետաքրքրեն ինչպես գրականությամբ գրադարձներին, այնպես էլ բնական գիտությունների նկատմամբ որոշակի հակում ունեցողներին: Սա մի գրուանք է իրականության ու նրա հայելային անդրադարձման միջով դեպի թվերի առենձվածային աշխարհը, որ վերածվում է նախ՝ ճանապարհորդության դեպի զարմանալի երևույթների բացահայտումները, որոնք պահանջում են գտնել իրենց գիտական հիմնավորումները հիգենիկական գրականության էջերում, ապա՝ անհրաժեշտ մի շուրջայցի մարդկության հնագույն պատկերացումներում, որտեղ ապրում են հերոսներ, որոնց ուրվագծերը համադրվելով՝ հայտածում են հավերժական մի կերպար, որ տարբեր անվանումներով ուղեկցում է մարդ արարածին իր գոյության ընթացքում:

¹ Անտուան դը Սենտ-Էքզպուապերի, Փոքրիկ իշխանը, Երևան, 1985, էջ 6: (Այս գործից հետագա հղումները կնշվեն կից):

Սենտ-Էքզյուպերի – Փոքրիկ իշխան. Կյանքի շրջափուլերը հեքիաթի հայելում

Անտուան դը Սենտ-Էքզյուպերին ծնվել է 1900 թվականի հունիսի 29-ին Լիոնում՝ կոմս Ժակ դը Սենտ-Էքզյուպերիի ընտանիքում: Ուզում եմ փոքրիկ ուշադրություն հրավիրել 6-րդ ամսվա՝ հունիսի վրա՝ նշելով, որ սա ինքնանպատակ հիշեցում չէ: Ուշադրության արժանի երկրորդ փաստը հունիսի 29-ի՝ շաբաթվա 6-րդ օր լինելն է. այդ օրն ուրբաթ էր, որ շատ ժողովուրդների օրացույցների համաձայն, ինչպես և մշակութալեզվական ավանդույթով՝ մինչև օրս էլ անվանվում է Վեցերորդ օր (հայերի հին շաբաթացույցում՝ «Վեցշաբթի»):



Սրանք, անշուշտ, վերլուծության գիտականության հետ որևէ առնչություն չունեցող փաստեր են, կամ... այդպիսին են թվում: Սակայն նույնիսկ ամենաաննշան թվացող փաստը կարող է բանալի դառնալ:

Վեց թիվը մի նոր հայտնություն էր ինձ համար Սենտ-Էքզյուպերիի կենսագորության և «Փոքրիկ իշխան» հեքիաթի մեջ: Անշուշտ, Էքզյուպերիի կյանքը լի էր իրադարձություններով ու դիպվածներով, սակայն

շրջադարձային է եղել հատկապես յուրաքանչյուր վեցերորդ տարին՝ սկսած ծնունդից:

6 տարեկան երեխան, որ վաղուց էր երազում իսկական մեքենաների մասին, վերջապես առաջին անգամ շրջագայում է շոգեկառքով:

12-ամյա Անտուանը վայելում է կյանքում առաջին իսկական թռիչքը:

18 տարեկան հասակում ընդունվում է գեղարվեստի դպրոց:

24-ամյա Երիտասարդն իրականացնում է առաջին ինքնուրույն թռիչքը, ենթարկվում աղետի, հրաշքով փրկվում մահից:

30 տարեկան հասակում գնում է որոնելու ծնահողմի մեջ ընկած ընկերոջը, ինչը հաջողությամբ է պսակվում: Ստանում է առաջին՝ Ֆեմինի գրական մրցանակը «Գիշերային թռիչք» վեպի համար: Հանդիպում է Կոնսուելոյին:

Կյանքի **36**-րդ տարում ինքնաթիռը վթարի ենթարկեց անապատում:

42 տարեկան էր, երբ «ծնվեց» «Փոքրիկ իշխանը»:

Բոլոր այս թվերը կազմում են հեղինակի կյանքի վեցամյա շրջափուլերի հետաքրքիր մի շղթա, ստեղծելով լուսավոր կետերի ամբողջություն, որ չորրորդ չափման մեջ (1900-44) ամրագրված է որպես Սենտ-Էքսպյուաթերի երևույթը հավերժացնող «համաստեղություն»:

Ամեն ստեղծագործություն իր մեջ բացահայտ կամ թաքրու կրում է հեղինակին: Հեքիաթի պատումը վերհուցի նման ներկայացնում է հեղինակի բոլոր «թռիչքները»՝ թույլ տալով անցկացնել հետաքրքիր մի գուգահեռ:

Սենտ-Էքսպյուաթերիի հետաքրքրություններն ու ունակությունները շատ վաղ են ի հայտ եկել: Նա շատ էր սիրում խաղալ ընկերների հետ, սիրում էր հեռավոր գրոսանքները, դիմակահանդեսները: Բայց աշխույժ այդ

Երեխան կարող էր ժամերով նստել ինքնամփով ու հետևել կրակի բոցերի խաղին, երազել ու տեղափոխվել հեքիաթների աշխարհը:



Փօքրիկ իշխանն էլ իր մոլորակի վրա սիրում էր նստել ու երկար դիմում վերջալույսը: Նա ասում է. «Մի օր ես 23 անգամ տեսա, թե ինչպես է մայր մտնում արևը»: Եվ մի փոքր սպասելուց հետո ավելացնում. «Գիտես, երբ շատ տիխուր ես լինում, լավ է վերջալույսին նայելը» (21)՝ ասես հայտածելով այն մելամաղձը, որով ներծծված էին Անտուանի ներաշխարհն ու նրա մանկության մոլորակի մթնոլորտը: Անտուանը վաղ հասակում սկսել է բանաստեղծություններ գրել, սովորել է ջութակ նվազել: Ուսեհեր այդ երեխան՝ այդ «Արքան», կարող էր հանկարծ արթնացնել ընտանիքի անդամներին գիշերվա կեսին, հավաքել բոլորին մի սենյակում և ստիպել լսել իր՝ հենց նոր հորինած բանաստեղծությունը: Հետո բացատրում էր. «Հասկանում եք, երբ ձեզ այսպես արթնացնում են, ձեր միտքը շատ է սրվում»:

Պատմում են, որ նրա այս վարքագիծը պահպանվել է ամբողջ կյանքում. նա կարող էր խոր գիշերվա մեջ

զանգահարել ընկերներից մեկին և ընթերցել քիչ առաջ գրած հատվածը կամ հայտնել մտքում ծագած նոր գաղափարի մասին²:

Արվեստով շաղախված հոգուց բացի ուներ նաև հետաքրքրասեր ու պրատող միտք, և անծիր երևակայությունն ու կուր մտածողությունը նրա թափառող մոլորակի երկու բևեռներն էին լինելու ողջ կյանքում.



Նրան այնքան գրավում էին մեքենաներն ու տեխնիկան: Նա մանկական երևակայությամբ ինչ-որ բաներ էր հորինում, տուփերով հեռախոս պատրաստում և երազում էր իսկական մեքենաների մասին: Այդպիսի մեքենաների հետ առաջին ծանոթությունը՝ առաջին քայլը ներսից դեպի դուրս, շատ չուշացավ:

Երբ նա կայարանում մոտեցավ մեքենավարին (սա առաջին կարևոր հանդիպումն էր երեխայի կյանքում), պարզվեց, որ մեքենավարը նրա անվանակիցն է՝ Անտուան:

Սենտ-Էքզուպերիի կյանքում մեծ նշանակություն ունեցող դեպքերը անմիջականորեն կապված են հեքիաթի հետ և նշանակալից են նաև Փոքրիկ իշխանի համար: Չվող թռչունների հետ վերջինիս ձանապար-

² Константинов А. Рыцарь планеты Земля, журнал "Альтернативы" № 2, 2008.

հորդությունն սկսվում է իր մոլորակից դեպի թագավորի մոլորակը թռիչքով, որ ելք էր յուրաքանչյուր մասնիկով իրեն ծանոթ աշխարհից:



Անունը էության անբաժանելի մասնիկն է, նրա հատկանշական որակումը, որ հաճախ որոշում է մարդու կոչումը կյանքում և նրան ուղղորդող վլաքը դառնում: Էքցուպերի և մեքենավարի անվանակցության անալոգիան արտացոլված է նաև հեքիաթում՝ «իշխան» և «թագավոր» տիտղոսների համանշության մեջ:

Անտուանը խնդրում է իրեն պտտել շոգեկանքով՝ առաջին անգամ ապրելով արագության և տեղափոխման ցնծագին վայելքը: Հեքիաթի հայելում՝ զուգահեռ իրականության մեջ, Փոքրիկ իշխանը թռչում է դեպի նոր մոլորակ՝ դեպի փառամոլի մոլորակը:

1910 թվականին Անտուանն ընդունվում է Մանքաղաքի ճիզվիտական դպրոցը, ուր տհաճությամբ էր հաճախում և որտեղ վաստ էր սովորում: Իսկ 12 տարեկան հասակում նա ստանում է առաջին օդային մկրտությունը: Օդաչու Վեդրինը նրան երկինք է բարձրացնում Ամբերիե քաղաքի օդանավակայանից: Սա առաջին «թռիչքից» 6 տարի անց կայացած երկրորդ՝ իսկական թռիչքն է:

Հեքիաթում Փոքրիկ իշխանը, թողած փառամոլին, թռչում է դեպի հարբեցողի մոլորակը:



Սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Անտուանը շարունակում է ուսումը Շվեյցարիայում: 1917-ին վերադառնում է Ֆրանսիա, ավարտում միջնակարգ կրթությունը և 18 տարեկան հասակում ընդունվում Գեղեցիկ արվեստների դպրոցի ճարտարապետության բաժինը: Սակայն չի տեսնում իր

կոչումը ճարտարապետության մեջ:

Գեղարվեստի դպրոց ընդունվելը Փոքրիկ իշխանի թռիչքն է հարբեցողի մոլորակից դեպի գործարար մարդու աշխարհը:

Գեղարվեստի դպրոց ընդունվելուց անցել էր 6 տարի, երբ Սենտ-Էքայուպերին կատարում է իր առաջին ինքնուրույն թռիչքը և, բարեբախտաբար, փրկվում է մահից:

Երևի նրա ճանապարհին ինչոր մեկը լուս է վառել, որովհետև միևնույն շրջափուլում՝ սեփական հաշվարկման համակարգում, Փոքրիկ իշխանը, թողնելով գործարար մարդու մոլորակը, հասնում է լապտերավառի մոլորակին և հրձվում նրա աշխատանքով. «Սքանչելի զբաղմունք է: Սա իսկապես օգտակար է, որովհետև գեղեցիկ է» (43):

Ի դեպ, Փոքրիկ իշխանը տալիս է գեղագիտական կատեգորիայի սեփական սահմանումը՝ համարելով օգտակար այն, ինչ գեղեցիկ է, դրանով իսկ հակադրվելով գեղագիտության պատմության մեջ գեղեցիկին տրված սահմանումներին՝ սկսած հնագույն քաղաքակրթությունների պատկերացումներից, ըստ որոնց գեղեցիկ է այն, ինչ օգտակար է, մինչև Հեգելի ու Կանտի գեղագիտական բնորոշումները:




Անցել էր ևս 6 տարի, և եքայուապերին օդանավով գնաց որոնելու ձնահողմի մեջ ընկած ընկերոջը և գտավ նրան: Սա էլ մի մեծ թռիչք էր, որ դարձավ «Մարդկանց երկիրը» գրքի լավագույն գլուխներից մեկը:

Եվ Փոքրիկ իշխանն այցելում է աշխարհագրագետի մոլորակ:

Իսկ երբ գրեթե լրանում էր 6 տարին այն օրից, երբ Սենտ-Եքայուապերին փրկել էր ընկերոջը, մեխանիկ Պրևոյի հետ ուղևորվում է թռիչք՝ Փարիզ-Սայգոն


Երթուղով: Ինքնաթիռը վթարի է ենթարկվում Լիբիական անապատում: Պարզ մի «զուգադիպությամբ»՝ Փոքրիկ իշխանն, աշխարհագրագետի մոլորակը թողնելով, իջել էր Երկիր, և նրանց երկուսի ողիսականները նախապատրաստել էին հետաքրքիր մի հանդիպում՝ հավերժական մի ակնթարթի մեջ նրանց ուղիները հատելով:



Սենտ-Էքզյուպերին անապատում մնաց 7օր: Երկրորդ օրը հանդիպեց Փոքրիկ իշխանին, նրան ձանաչեց 6օրում: Այդ 6 օրերը երկի Սենտ-Էքզյուպերիի համար եղան կյանքի անցած 6 շրջանների մասին վերհուշի օրեր: Իսկ այն օրը, երբ Փոքրիկ իշխանը պիտի վերադառնար իր մոլորակ, երբ նաև ինքը պիտի հեռանար անապատից, սկսվում է կյանքի 7-րդ շրջանը, որի մեջ էլ հենց ստեղծվել է այս անզուգական հեքիաթը:

Հեքիաթն սկսվում է «Երբ ես 6 տարեկան էի...» նախադասությամբ, և այլևս կասկած չի մնում, որ


Սենտ-Էքզյուպերիի համար 6-ը ճակատագրական թիվ է, և որ նրա Երկրային կյանքի ժամանակահատվածում տեղավորվող 6-ին բազմապատիկ բոլոր թվերը նշանակալից էին և իրենց խորհուրդն ունեին:



Թիվը որպես Երևակայության ֆիգուր

Խորհրդավոր է մարդկային կյանքը: Բոլոր գիտությունները յուրովի փորձում են համակարգել նրա օրինաչափությունները և գտնել բանական բացատրություններ նրա առեղծվածներին, բայց այդ զարմանահրաշ Երևույթը մնում է անսահմանելի:

Առեղծվածային Երևույթներից մեկն էլ, թերևս, որևէ թվի տևական ներգործությունն է մարդու կյանքի ընթացքի վրա՝ որպես ճակատագրի ազդանշան:



Ամեն մարդ, չգիտես թե ինչու, ունի իր սիրած թիվը, և ինքն էլ չի նկատում, թե ինչպես է իր խոսքով, արարքներով պատվում հենց այդ թվի շուրջ (հաճախ չափազանցնելիս ականա արտաքերում է այն. «10 ժամ է քեզ եմ սպասում», «6 անգամ ասացի, էլի մոռացար», «Երկու րոպեի ճանապարհ է»):

Նույն Երևույթի կրկնությունը կարող է զուգադիպություն համարվել, երրորդ դրսնորումը՝ ուղղակի պատահականություն: Բայց եթե այն դառնում է կյանքի կշռույթ, այլևս անհիմաստ է ապացուցել, որ այն օրինաչափություն է՝ տիեզերական պարբերականության դրսնորում տիեզերքի մանրակերտում:

6 թվի վերծանումը չափազանց ուշագրավ է: Այդ թիվն ընկած է տարածության ու ժամանակի բոլոր կոռորդինացումներում և ունի առանցքային նշանակություն: Մեկ րոպեն 6 անգամ 10 վայրկյան է, մեկ ժամը՝ 6

անգամ 10 րոպե, մեկ օրը՝ 4 անգամ 6 ժամ, մեկ տարին՝ 2 անգամ 6 ամիս կամ 366 օր՝ 61 անգամ 6 օր կամ մեկ լրիվ պտույտ արևի շուրջ, իսկ մեկ պտույտը երկրաչափորեն հավասար է 360 աստիճանի, որը 6 անգամ 60 աստիճանն է: Հավասարակողմ վեցանկյուններով կարելի է ծածկել հարթությունը, վեցանկյուն պրիզմաներով կարելի է լցնել տարածությունը, և սա մեծագույն «իմաստնությամբ» կիրառում է մեղուն: Երկնքից թափվող բոլոր փաթիլները ճշգրիտ սիմետրիայով կառուցված վեցաթև աստղիկներ են, ցանկացած շառավղով շրջանագիծ կարելի է շրջապատել նույն շառավղով վեց շոշափող շրջանագծերով, իսկ նրանց կենտրոնները միացնելով՝ կարելի է ստանալ **6** հավասարակողմ եռամկյուններ, որոնց բոլոր անկյունները հավասար կլինեն 60 աստիճանի և այլն:

Թվերի տեսությունը, որ ծագել է անտիկ աշխարհում (նրա հիմքերը դրել են Պյութագորասն ու Էվկլիդեսը), փորձել է համակարգել թվերը՝ հայտնաբերելով նրանց օրինաչափություններն ու այլ թվերի հետ հարաբերությունները: Բնական թվերի համար կիրառելի են կենտ, զույգ, պարզ, բաղադրյալ, կատարյալ և այլ հասկացություններ: Թվային այս խմբերից յուրաքանչյուրն օժտված է հետաքրքիր ու զարմանալի հատկություններով:

Օրինակ՝ կատարյալ են այն թվերը, որոնք հավասար են իրենց բոլոր բաժանարարների գումարին: 6-ը առաջին կատարյալ թիվն է՝ $6=1+2+3$: Կատարյալ թվերն անհամենատ քիչ են. բավական է նշել, որ մինչև 10000-ը դրանք ընդամենը 4-ն են՝ **6, 28, 496, 8128**, և նրանցից առաջինն այնքան հաճախ է հայտնվում հեքիաթում: Հենց այդ թվի խորհուրդն է կազմում նաև Եքայուպերիի կենսագրության առանցքը:

* * *

Բայց հետաքրքիրն այն է, որ Եքայուապերիին առհասարակ գրավում է թվերի կախարդական աշխարհը: Թերևս այդ պատճառով է մանկությունից այնքան սիրել թվաբանությունը (անշուշտ՝ ոչ այն թվաբանությունը, որի մասին պատմում է հեքիաթում). գուցե թվերի մեջ առեղծվածային ինչ-որ բան է նշմարել՝ հետազայում համոզվելով, որ դրանք պատահաբար չեն տրվել մարդու գիտակցությանը, որ դրանց վերացական բովանդակությունը (նույնքան վերացական, որքան մարդու միտքն է) ձշգրիտ արծանագրումն է իրական աշխարհի բոլոր առնչությունների (նույնքան իրական, որքան մարդու միտքն է), դրանք խորհուրդներով խիստ ծանրաբեռնված նշաններ են՝ խորհրդանշաններ:

Հեքիաթի առաջին տողից սկսած՝ ամբողջ հեքիաթով մեկ թվերի դիմակահանդես է: Փոքրիկ իշխանի այցելած մոլորակները, ինչպես նաև հենց իրենք, անունների փոխարեն թվեր են կրում: Ընդ որում, Փոքրիկ իշխանի մոլորակի համարն է 612, որ նույնպես 6-ի բազմապատիկն է: Իր մոլորակի վրա 3 հրաբուխ ունի, 1 վարդ, որը 4 փուշ ունի, Երկրի վրա մի պարտեզում 5000 վարդ կար, անապատի ծաղիկը, որ մարդկանց մասին գիտեր ընդամենը այն, որ նրանք 6 կամ 7 հոգի են, 3 թերթիկ ուներ, ամենատխուր օրը Փոքրիկ իշխանը 23 անգամ տեսել է, թե ինչպես է մայր մտնում արևը, լապտերավաշի մոլորակի վրա կարելի էր նույնը տեսնել 1440 անգամ, ծարավ հագեցնող հարերով կարելի էր 53 րոպե խնայել, գործարար մարդը գիտեր աստղերի թիվը, որ հավասար է 501.622.731-ի և այն: Իսկ Երկիր մոլորակի չափերը ներկայացնելու համար Եքայուապերին ասում է, որ այնտեղ 111 թագավոր կա, 7.000 աշխարհագրագետ, 900.000 գործարար մարդ, 7.500.000 հարբեցող, 311.000.000 փառամոլ, իսկ 6

աշխարհամասերի վրա նախքան էլեկտրականության հայտնաբերումը 462.511 լապտերավառներ էին աշխատում, և դա հրաշալի էր, որովհետև բալետի էր նման ամբողջ այդ «բանակի» շարժումը:

Հեքիաթում հետաքրքիր անհամաձայնություն կա, մերժում և հափշտակություն միաժամանակ, մի ներքին պարադոքս: Հնչում է հանդիմանանք մեծահասակների հասցեին, թե նրանք շատ են սիրում թվեր և միայն դրանցով են պատկերացնում իրերն ու երևույթները, թե նրանք, ովքեր հասկանում են՝ ինչ է կյանքը, ծիծաղում են համարների ու թվերի վրա: Սակայն միևնույն պահին թիվը այս հեքիաթի անբաժան և ամենահատկանշական տարրն է:

Թիվը, որ թանձրացականի, կոնկրետի, հաշվելիի, ընդհատականի բնորոշիչն է, ինքնին չափազանց վերացական է, աբստրակցիայի արդյունք. առանց առարկաների դժվար է որևէ թիվ պատկերացնել, բայց թվերը գիտակցվում են առարկաներից անկախ:

Բայց ինչո՞ւ է հեքիաթը ողողված թվերով:

Թիվը, ինչպես և բառը, կարելի է հոգեբանական գրգռիչ համարել, որն ազդում է ուղեղի որոշակի հատվածի վրա՝ առաջ բերելով համապատասխան արձագանք: Սովորական խոսքում այդ բանն այնքան էլ նկատելի չէ, թեև միշտ գործում է, իսկ բանաստեղծական ռիթմիկ խոսքում (պարտադիր չէ՝ չափածո) բարի կախարդանքն ակնհայտ է: Հոգեբանության մեջ խիստ զգալի է խոսքի ազդեցությունը. բարերի միջոցով կարելի է ցուտից դողացող մարդուն ներշնչել, որ անառ է, և նա կդադարի դողալ: Սա բարի ազդեցության ամենապարզունակ օրինակ է: Հոգեբանը թույլ ու միալար կրկնվող բարերի օգնությամբ կարող է հիանոսի ենթարկել մարդուն:

Բազմաթիվ օրինակներից, որ կարելի է հանդիպել գրականության մեջ, ուզում եմ մեջբերել Տերյանի մի բանաստեղծությունը.

Քնքո՛ւշ, դու լուսե աղջիկ ես,
Արտոնւտ ես, ոսկե թռչնակ ես,
Չար նետը թող չղիազի՛ քեզ,
Աշուն ու ձմեռ չգա՛ քեզ:
Թող սիրտդ մնա խնդուն հար,
Հոգին քո, -լուսե թիթեռդ-
Խաղա՛ հար և հուրիրա՛ վառ,
Չար հուրը չայրե թներդ:
Հրե՛ դու, արևայի՞ն դու,
Մաքո՞ւ դու, լուսե հասմիկ ես.
Անմար թող ցոլա քո խինդը,
Չար աչքը թող չտեսնի՛ քեզ...³

Պատահական չէ այս ընտրությունը: Ժողովրդական բանահյուսությունը հարուստ է հմայական խոսքերով, որոնցից լայնորեն կիրառվում են «չար աչքը» վնասազերծող խոսքերը. «Չար աչք՝ չար փշին, չար փուշ՝ կրակին», «Չար աչքը ծիտ լակե»: Հմայանք հիշեցնող բանաստեղծության մեջ, որպես հակակշիռ «լուսե աղջիկ», «լուսե թիթեռ», «լուսե հասմիկ» եռյակի, երեք անգամ հանդիպում է չարը վնասազերծող բանաձև, որ հուռութքի պես իր վրա է սևեռում ուշադրությունը, իսկ խորքում նկատելի է կորստի մեծ երկյուղ, որ մարդ զգում է աշխարհում ամենաթանկ էակի համար:

Սենտ-Էքսյուպերին ոչ միայն ասում է՝ «մեծահասակները թվեր շատ են սիրում», այլև հոգ է տանում, որ էությունը չճանաչողները չսողոսկեն գոքի անեղծ խոր-

³ Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ.1, Երևան, 1960, էջ 206:

թերը՝ առանց այդ թվերի խորհրդավոր հմայքին տրվելու. նա ստեղծագործության մեջ շաղ է տալիս թվեր, որոնց գործառույթներից մեկը (միայն մեկը) ասես երևակայությունից զուրկ մտքերը զբաղեցնելն է ու դրանք շեղելը այն ամենից, ինչ պետք է պահպանել, ինչը կարող է հանգչել «քամու պոռթկումից»: Թող դրանցում «մեծահասակներն» ընդամենը թվեր տեսնեն, նշաններ, ինչպես իր առաջին նկարում՝ գլխարկ: Եվ այդպիսով՝ գրքի էությունն ամփոփվում է թվե «տուփի» մեջ, ինչպես գառնուկը՝ արկղում: Բայց նրանք չեն ել նկատում, թե ինչպես են իրենց սիրելի թվերի գայթակղությամբ ու մոգությամբ հայտնվում մի տարածության մեջ, որտեղ միտքն ազատ է բոլոր պայմանականություններից, որտեղ կարող է խտացված լինել այն ամենն, ինչ մարդկությունը կուտակել է իր գոյության ընթացքում, մի տարածություն, ուր մուտք չունի բանականությունը, բայց որտեղ թաքնված են բոլոր ելքերը:

Ահա, առաջին հայացքից անկարևոր թվացող անհամար թվերի օգտագործումն այս հեքիաթում ձեռք է բերում հոգեբանական արժեք՝ ընթերցողին պահելով յուրատեսակ հիպնոսի մեջ, տրանսի ենթարկելով միտքը, հեռացնելով կոնկրետից ու մտքի համար անընդգրկելի մեծություններով այն տանելով դեպի տիեզերական բազմաթիվ ու բազմաբնույթ կապերն ու առնչությունները:

* * *


Հեքիաթում կա փոքրիկ՝ հեքիաթի համար աննշան ու անկարևոր մի պատմություն: Այն տեքստում գետեղվել է՝ ասես Փօքրիկ իշխանի մոլորակի մասին հավաստի տեղեկություններ հաղորդելու նպատակով: Բայց այդ պատմությունն իր հերոսով արդեն թերահավատություն է առաջացնում: Այսպես՝ Թուրքիայում

միայն 1963 թվականին է բացվել գիտատեխնիկական հետազոտական ընկերությունը, այդ երկիրը մինչ այդ չի ունեցել գիտական հիմնարկների միասնական համակարգ, և Սենտ-Էքզյուպերիի փաստարկը սքանչելի հայտնագործություն կատարած թուրք աստղագետի մասին հնչում է հեգնանքի պես: Անբողջ հեքիաթում ընդամենը երկու տարեթիվ կա. մեկը 1909 թվականն է, երբ հիշյալ աստղագետը հայտնագործեց թիվ 612 մոլորակը, մյուսը՝ 1920-ը, երբ աստղագետների միջազգային կոնֆրենսում բոլորը համաձայնեցին նրա հետ Եվրոպական հագուստով ներկայանալուց հետո միայն:



Պատահական թվականներ չեն, որ ասում է Էքզյուպերին: Դրանք երկուսն էլ Թուրքիայի համար կարևոր տարեթվեր են. 1909 թվականին իշխանության գլուխ են անցնում երիտրուլերը (նույն թվականին նրանք կազմակերպում են 30000-ից ավելի հայերի կոստորածք), իսկ 1920-ին Անտանտի և Թուրքիայի միջև կնքվում է Սկրի հաշտության պայմանագիրը, որը քե-


մալական կառավարությունը չձանաչեց, և սկսվեց հայրությական պատերազմը:



Իսկ աստղագիտական հայտնագործությունը, թուրքական տարազը, միջազգային կոնգրեսը, թուրքին չիավատալը, վերջին նորածնության Եվրոպական հագուստը և ի վերջո նրա հետ համաձայնելը ասես քաղաքական այլաբանություն են, որտեղ ևս արձագանքվում է հեքիաթի հիմնական գաղափար՝ «Միայն սիրոն է սրատես, ամենագիխավորը աչքով չես տեսնի» (64): Թիվ 612 մոլորակի բախտից էր, որ թուրք սուլթանը մահվան սպառնալիքով իր հպատակներին հրամայել էր Եվրոպական հագուստ հագնել. շատ ազգեր «քաղաքակրթվում» և «քաղաքակիրթ» աշխարհի կողմից ընդունվում են տարազը կոստյումով փոխարինելով: Այս փոքրիկ, ի միջի այլոց արված պատմության հերոսներից ոչ մեկը չէր տեսնում գլխավորը:

* * *

Եքայուպերիի օգտագործած բոլոր մյուս թվերն էլ, որոնք առաջին հայացքից կարող են կամայականորեն տեքստում հայտնված համարվել, պատահական թվեր չեն: Գուցե ավելի լուրջ ուսումնափրության արդյունքում շատ ավելի հետաքրքիր բացահայտումներ լինեն, սակայն բավական է մի փոքր ուշադրություն դարձնել դրանց վրա՝ համոզվելու համար, որ դրանք պատճառաբանված են հեքիաթի տեքստի տրամաբանությամբ:



Հեքիաթում հայտնված առաջին թիվը առաջին կատարյալ թիվն է՝ 6-ը: Այն հեքիաթում հաճախ է օգտագործվում, բայց միշտ կապվում է կամ հեղինակի նանկության, կամ Փոքրիկ իշխանի հետ, որը նույն

ինքը՝ հեղինակն է, կամ մանկության մարմնավորումն ընդհանրապես: Կարելի է նույնիսկ ասել, որ հեքիաթում մանկության թվային կողմը, մաթեմատիկական սիմվոլը վեցն է: Այս և նրան բազմապատիկ բոլոր թվերը, որ հայտնվել են հեքիաթում, առնչվում են գեղեցիկի, պայծարի ու լուսավորի հետ:

Եթե կատարյալ թիվը հավասար է իր բոլոր բաժանարարների գումարին, ապա թվերի մեկ ուրիշ խումբ՝ պարզ թվերը, չեն բաժանվում ուրիշ ոչ մի թվի, բացի 1-ից և իրենցից, նրանք նման են կոլապսի ենթարկվող աստղերի, որոնք սև խոռոչներ են առաջացնում տիեզերքում՝ թույլ չտալով լույսի որևէ մասնիկի անջատումն իրենցից, դրանք կենտ թվեր են, իսկ հեքիաթում դարնում են մենություն, անհաղորդություն, մոլորվածություն, անհեթեթություն ու տիսրություն բովանդակող որոշիչներ: Օրինակ՝ հեքիաթում ասվում է. «Նոր հայտնաբերված փոքր մոլորակներին աստղագետները անվան փոխարեն տալիս են համար, օրինակ՝ 3251» (13): Կամ ծարավ հագեցնող հաբերն օգնում են շաբաթական 53 րոպե տնտեսել (Փոքրիկ իշխանի համար շատ անհմաստ մի բան, որովհետև այդքան ազատ ժամանակ ունենալու դեպքում կարելի էր պարզապես գնալ աղբյուրը՝ ջուր խմելու), և կամ իր մոլորակի վրա Փոքրիկ իշխանը ամենատիսուր օրը 23 անգամ վերջալուս է դիտել: Այս թվերը գեղագիտականի ու աշօրեականի, կարևորի ու երկրորդականի բախման արտացոլանքն են: Նրանք ինչ-որ կիսատություն են ցուցադրում. բավական է՝ նրանց մտովի ավելացնենք 1, և նրանք ներքուստ կզնգան, կսկսեն գոնե երկուսի բաժանվել, կասոցիացվեն ինչ-որ երևոյթի հետ, օրինակ՝ օրվա, որն ունի 24 ժամ: Ընդ որում, ստացված թվերը կլինեն 6-ի բազմապատիկ: Բայց հարկ է, որ այդպիսի թվեր չգործածվեն այնտեղ,

որտեղ աշխարհի կիսատությունն ու անկատարությունն են երևում:

Իսկ ավատանք արտահայտելիս երբեք պարզ թվեր չի գործածում, որովհետև այն, ինչի համար կա ավատանք, պայծառ պիտի լինի ու լուսավոր:

Եթե թագավորի հզորությունն ունենար Փոքրիկ



իշխանը, կարող էր ոչ թե 44, այլ 72, նույնիսկ 100 անգամ դիտել Վերջալուսը, այն էլ՝ առանց աթոռը տեղափոխելու: Երբ աստղերը հաշվող գործարար մարդը բողոքում է, որ իր կյանքում երեք անգամ են իրեն խաճարել, նրա կարձ խոսքում գերիշխում են թվերը, որոնք դարձյալ պատահական են թվում, բայց, բացի նրանից, որ թվաբանական խնդիր են հիշեցնում և այն լուծելու գայթակղություն առաջացնում, Վերստին տրամադրությունների ու զգացողությունների կրողներ են:

«Արդեն հիսունչորս տարի է, ինչ ես ապրում եմ այս մոլորակի վրա, և այդ ընթացքում ինձ միայն երեք անգամ են խանգարել: Առաջին անգամ՝ քսաներկու տարի սրանից առաջ, չգիտես՝ որտեղից հայտնվեց մի մայիսյան բգեզ: Նա սարսափելի աղմուկ բարձրացրեց, և ես գումարման ժամանակ չորս սխալ արեցի: Երկրորդ անգամ՝ տասնմեկ տարի առաջ, ռևմատիզմի նոպա ունեցած: Նստակյաց կյանքից: Երրորդ անգամ՝ ահա սա» (39) նկատի ունենալով Փոքրիկ իշխանի այցելությունը: Անգամ ամենաաննշան կենդանի արարածի ներկայություն կարող է խախտել անհեթեթեք մենությունը, իսկ որտեղ չկա մենություն, չկան պարզ թվեր. ուստի՝ 22 տարի առաջ 32 տարեկան էր, երբ հայտնվեց բգեզը. 54 տարեկան է, և կրկին խախտվեց իր մենությունը, իսկ 11 տարի առաջ 43 տարեկան էր, երբ վրա հասավ ռևմատիզմի ախտաժամ իր մենության «խեցու» մեջ, ուստի այստեղ անհրաժեշտաբար գործածվել են խխունջի նմանվող պարզ թվեր: Ընթերցողը, առանց խորամուխ լինելու էլ թվերի վերը նշված օրինաչափությունների բացահայտման մեջ, անշուշտ զգում է թվերից փոխանցվող տրամադրությունը: Կարող ենք համարձակորեն ասել, որ սա զարմանալի մի նորարարություն է գրականության մեջ, մոտավորապես այնպիսի, ինչպիսին էր Ռեմբոյի՝ ձայնավոր հնչուններին գույների վերագրումը:

* * *

Բայց եքայուպերիի հեքիաթում թվերն ունեն նաև միֆական արժեք: Հեքիաթն ասես կրում է թվերի հնագույն միֆապոետական կոնցեպցիայի հետքերը, երբ թվերը, առանձնանալով իրերից, ձեռք բերելով ինքնուրույնություն, արտացոլում էին աշխարհի կերպարանքը:

Տարբեր ազգեր իրենց ծիսական տեքստերում, բանահյուսական ստեղծագործություններում օգտա-

գործում են թվային որոշակի կայուն դաս, որ ձևավորվել է այն ժամանակ, երբ կատարելագործվում էր թվային համակարգը:



Այդ փուլի դրոշմը նկատելի է որոշ ազգերի մշակութական պահույթում, որոնք կիրառում են հաշվարկման 7-ական կամ 12-ական համակարգեր. օրինակ՝ անգլերենում թվարկման մեջ միավորների շարքն ավարտվում է 12-ով, իհարկե, միայն լեզվական մակարդակում, բայց նման երևոյթները լեզվում պատահական չեն, այլ արտացոլում են մարդկության երբեմնի պատկերացումները աշխարհի ու տիեզերքի մասին: Հիմնականում թվային միատիկան կապվում է լուսատուների հետ և հաստատվում կրոնի հիմքում:

Ամենահին տեքստերում 1 թիվը գրեթե չի հանդիպում, պատճառն այն է, որ այն ժամանակակից իմաստով չէր ընթանվում, որպես թվային շարքի առա-

զին տարր, այլ նշանակում էր ամբողջություն, միակություն, որ տիեզերքն է կամ Աստված: 2-ը ընկալվում էր որպես ամբողջի՝ փոխադարձաբար միմյանց լրացնող մասեր, ինչպես գիշերն ու ցերեկը, այրն ու կինը, բարին ու չարը և այլն⁴: Այդ պատճառով 1-ը և 2-ը թվեր չեն համարվում: Ըստ մի շարք ավանդությունների՝ առաջին թիվը 3-ն է, որ համարվում է «կատարյալ» թիվ (այստեղ «կատարյալ» բնորոշումը կապ չունի գիտական այն տերմինի հետ, որ ներկայացվեց Վերևում): Այն ոչ միայն բացարձակի, կատարելության պատկերն է, այլև հասարակական կառուցվածքի և միֆապոետական մակրոտիեզերքի հաստատումը:

Հունական դիցարանում աշխարհը բաժանվում է Քրոնոսի երեք որոիների միջև, Սոյրաները երեքն են, Պոսեյդոնի աստիքուտը եռածանին է, հայտնի են Ապոլոնի եռոտանիները, Հերմեսը երեք ճյուղերով է ստեղծում քնարը, Հաղեսի թագավորության մուտքը պահպանում է Կերբերոսը, որ եռազլուխ շուն է, Հայկը երեքթևյան նետով սպանեց Բելին, Վերջապես, քրիստոնեության մեջ ևս ամրագրված է Երրորդության գաղափարը (Հայր-Որդի-Սուրբ հոգի, Հույս-Հավատ-Սեր) և այլն:

Այս սիմվոլը ավելի բնորոշ է հեքիաթներին (թվարկման կարիք պարզապես չկա):



Պոսեյդոն

⁴ Мифы народов мира, т. 2, симр. 630.

Արվեստի բոլոր ճյուղերում գործում է այս թիվ-սիմվոլ՝ նաև որպես ստեղծագործական սկզբունք, ինչպես տրիլոգիան կամ տրիպտիխը:

Ամենահաստատուն վիճակում է Երեք կետերով հենված մարմինը, այս փաստն ունի իր գիտական բացատրությունը. Երեք կետերով հենված մարմնի հավասարակշռության կենտրոնը գտնվում է իր հենակետերով գծված եռանկյան ներսում:

Տիեզերագիտության ուսմունքում Պլատոնը գտնում էր, որ բոլոր իրերի վերջին տարրերը անբաժանելի եռանկյունիներն են⁵: Հեզելի փիլիսոփայության մեջ եռյակը բացարձակ ու համընդհանուր սկզբունք է, սխեմա, որով ընթանում է զարգացումը (թեզ, հակաթեզ, սիմթեզ): Նյութերն ունեն Երեք վիճակներ՝ գազային, հեղուկ և պինդ:

Հնում, իհարկե, կրոնը, արվեստն ու գիտությունը դեռևս տարանջատված չէին, և նրանց հիմքը նույնն էր: Ուստի, սիմվոլ այսօրվա իմաստը չուներ. այն աշխարհի կերպավորումն էր, այն ոչ թե երևույթի նշանն էր, այլ՝ նրա էությունը և կենսական նշանակություն ուներ հին մարդու համար: Եվ այն սկզբունքը, որով նա փորձում էր համակարգել միկրո- և մակրոտիեզերքների առնչություններն ու փոխներգործությունը, կայուն սիմվոլների համակարգ էր ստեղծելու, որը անվերջ պիտի ճշգրտվեր ու հաստատվեր մարդկության ողջ գիտական կյանքի ընթացքում:

Հին հոյները վաղ շրջանում առանձնացնում էին տարվա երկու եղանակ, ապա՝ Երեք, ավելի ուշ՝ չորս: Տարվա՝ Երեք մասից կազմված լինելն արտացոլված է մեռնող ու հարություն առնող բնության աստվածությունների մասին պատմող առասպելներում: Օրինակ՝


⁵ Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ, Երևան, 1979, էջ 76:

Աղոնիսը, Զևսի որոշմամբ, պիտի տարվա 1/3-ը անցկացներ Պերսեփոնեի հետ Հաղեսում, 1/3-ը՝ Ափրոդիտեի հետ, իսկ մնացած 1/3-ը տնօրիներ իր կամքով:

Տարվա չորս եղանակների առանձնացումը հավանաբար տեղի է ունեցել այն ժամանակ, երբ մարդկությունը Արևի շուրջ Երկրի տարեկան պտույտում ֆիքսեց կարևորագույն չորս կետերը՝ զարնանային ու աշնանային գիշերահավասարները և ամառային ու ձմեռային արևադարձի կետերը, ընդ որում, այս չորս կետերին համապատասխանում էին կենդանակերպի չորս նշանները՝ խոյ, կշեռք, խեցգետին, այծեղջուր, որոնք էլ իրենց հերթին համապատասխանում էին չորս տարերին՝ համապատասխանաբար՝ կրակ, օդ, ջուր, հող: Իսկ եղանակների նման բաժանումը տեղի ունեցավ այն փուլում, երբ սկսեցին զբաղվել Երկրագրծությամբ, և անհրաժեշտ էր վարուցանքի ճիշտ ժամանակը որոշել՝ առաջնորդվելով լուսատուներով: 4-ական ամիսներ պարունակող 3 եղանակներին փոխարինելու եկան 3-ական ամիսներով 4 եղանակները, և սա ավելի կատարյալ բաժանում էր: Երկու դեպքում էլ 3-ն ու 4-ը անխօնիորեն կապված են մարդկության աշխարհընկալման ու աշխարհաձանաշման հետ: Քաղաքները կառուցելիս հնագույն քաղաքակրթություններն առաջնորդվել են աշխարհի չորս ծագերով, տաճարներն ու եկեղեցիները կառուցելիս նույն սկզբունքն են կիրառում: Իսկ 3-ի և 4-ի անքակտելի կապը ակնհայտորեն մարմնավորված է Եգիպտական հսկայական սիմվոլներում:

Ի տարբերություն դիմամիկ ամբողջականություն խորհրդանշող 3-ի՝ 4-ը կայուն ամբողջականության պատկերն է: Որոշ տեսակետների համաձայն՝ 3-ը խորհրդանշում է կառուցվածքի անավարտությունը, մինչդեռ 4-ը օգտագործվում է տիեզերքի ստեղծման ու

Նրանում կողմնորոշման մասին միֆերում⁶: Եռաչափությունը՝ որպես աշխարհի ամբողջական ու սպառիչ նկարագիր, այնուամենայնիվ, կարիք ուներ լրացման։ Միեզերքի ձշգրիտ կորոդինացման համար անհրաժեշտ էր չորրորդ չափումը՝ ժամանակը, որ ֆիզիկայում մուտքագրեց Ենշտեյնը՝ աշխարհը դարձնելով քառաչափ։ Յուրաքանչյուր չորրորդ տարվա օրերի քանակը մեկով ավելի է մյուսներից, և այդ մեկ օրն առաջանում է տարվա մեջ ավելցուկային քառորդ օրվա շնորհիվ։



Թեյշեբա

Յունգը նշում է, որ եռյակն ու քառյակը արքետիպային կառուցվածքներ են, որոնք կարևոր դեր են խաղում ցանկացած սիմվոլիկայում, ինչպես և կարևոր են միֆերն ու երազներն ուսումնասիրելիս։ Չորրորդությունն իր մեջ պարունակում է մարդու ինքնությունը, որն անհատականացման արդյունք է, և խորհրդանշում է նրա ամբողջականության «կենտրոնը»⁷։ Հոգեբանական ուսումնասիրություններում, մասնավորապես՝ հենց Յունգի աշխատություններում, երրորդությունը արական մենաշնորհ է, 3-ը համարվում է արական, 4-ը՝ իգական թիվ⁸։

Որպես հոգեվերլուծաբանի այս եզրահանգումը հաստատող օրինակ՝ բերենք հայոց հնագույն քաղաքակրթությունից պահպանված նշաններից։ Վանի թագավորության պետական կրոնում Թեյշեբան, որ ընկալվել է որպես բնության տարերքը խորհրդանշող մի

⁶ Мифы народов мира, т. 2, стр. 630.

⁷ К. Г. Юнг, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004, с. 22.


⁸ К. Г. Юнг, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004, с. 327.

Երևույթ, պատկերվել է որպես զահին նստած մորուքավոր մի աստվածություն՝ ձեռքին 3 հասկ: Իսկ ՈՒրարտուի գլխավոր աստվածուին՝ ՈՒարուբահնին, որ Խալդիի կինն էր, պտղաբերության, արվեստները հովանավորող աստվածուին, պատկերվել է գլուխն ու մեջքը ծածկող գլխաշորով, կուրծքը զարդարված 4 շար ուլունքներով և դաշույն հիշեցնող խաչաննան կախիկով, որի կոթին քանդակված է մի պառկած առյուծ:

Այս Երկար էքսկուրսը թվերի աշխարհով, որ դեռ անվերջ կարելի էր շարունակել, ինքնանպատակ չկատարեցինք, և ահա թե իմչու:

Ըստ Էքպուպերիի հեքիաթի՝ Փոքրիկ իշխանն իր մոլորակի վրա ունի ընդամենը 3 հրաբուխ և մեկ վարդ, որն ունի 4 փուշ: Այստեղ հստակ երևում է Յունգի մատնանշած կապը սեօի և այն խորհրդանշող թվի միջև: Ամբողջ հեքիաթում զգացվում է միայն արական սկզբի ներկայությունը. Իշխանն ինք՝ փոքրիկ տղա, բոլոր մոլորակների մենակյացները այրեր էին, անապատում հայտնված իշխանի երկվորյակը՝ նույնպես: Անգամ անապատում իշխանին հանդիպած փոքրիկ ծաղիկն էր օժտված արական մենաշնորհով՝ եռաթերթ էր:

Ծույլ մարդն իր մոլորակի վրա բարբարի երեք թուսի ժամանակին չէր քաղիանել, և...: Փոքրիկ իշխանն մոլորակին ամենամոտ մոլորակների անունները, ավելի ճիշտ՝ համարները, մտապատկերվում են



ՈՒարուբահնի

ամենից առաջ իրենց գրավոր տեսքով. նրանք եռանիշ թվեր են, և բոլորն էլ սկսվում են 3-ով:

3-ի հիպնոսող կրկնությունները ամեն անգամ պտտվում են որպես խորհրդանշան՝ այդ թիվն իր վրա կրող արական սկզբունքի: Բայց իշխանի ձամփորդության ընթացքում երկու անգամ 3-ի ու 4-ի կապի սիմվոլիկ արձագանքն է լսվում՝ գործարար մարդու բողոքի մեջ, թե 3 անգամ խանգարել են իրեն, ինչի արդյունքում 4 սխալ է թույլ տվել, և աղվեսի խնդրանքում. «Եթե դու գաս ժամը 4-ին, ես ժամը 3-ից արդեն ինձ երջանիկ կզգամ» (61):

Կարդը ուշ է հայտնվում մոլորակի վրա, իսկ նրա հայտնվելուց քիչ անց Փոքրիկ իշխանը լքում է նրան: Իգական սկիզբը դեռևս օտար էր Փոքրիկ իշխանին:

Կարդը հենց իգական սկզբի խորհրդանշանն է՝ իրեն բնորոշ 4 փշերով: Այս թիվը ևս կարելի էր համարել հեքիաթը ողողած պատահական թվերից մեկը, բայց ավելի հավանական է, որ անգիտակցականի խոր ու անթափանց շերտերից հանկարծ հայտնվել է հնագույն միֆական սիմվոլը՝ առանց իր մասին տեղեկացնելու:

Յունգը «կոլեկտիվ անգիտակցական» է անվանում այն ակունքը, որտեղից կարող է սնվել ձշմարիտ արվեստը, և յուրաքանչյուր անհատ նրանում կարող է իր սեփական ներաշխարհի արտացոլանքը տեսնել: «Անգիտակցականը՝ որպես արքետիպերի ամբողջություն, նստվածքն է այն ամենի, ինչ վերապրել է մարդկությունը՝ սկսած իր ամենամութ սկիզբներից»⁹:

⁹ Хрестоматия по философии, М. 2001, стр 302.

Մանկան արքետիպը և Փոքրիկ իշխանը

Ստեղծագործությունը կարելի է քննել տարբեր տեսանկյուններից՝ գեղարվեստական, գրականագիտական, փիլիսոփայական, հասարակագիտական և այլն: Բայց յուրաքանչյուր երկ նախնառաջ անպայման ունենում է հոգեբանական նախադրյալներ և անմիջականորեն կամ որոշակի միջնորդավորվածությամբ տալիս է հեղինակի հոգեկան վիճակի, կյանքում տեղի ունեցած կարևոր և ոչ այնքան էական դեպքերի «արձանագրությունը»:

Մենտ-էքզյուպերիի հեքիաթը ասես հոգեվերլուծաբանի առջև պատմված մի երազ է, որն սպասում է մեկնության: Նախքան երազը մեկնելը հոգեբանը կարծես հիանոսի միջոցով երազատեսին ժամանակի մեջ փորձում է տեղափոխել դեպի այն պահը, երբ տեղի է ունեցել ճակատագրական շեղումը նախասահմանված ուղղուց: Հետաքրքիր կերպով այստեղ հոգեբանն ու հոգեվերլուծության ենթարկվող անհատը միևնույն անձն են:

Արվեստի մեծ գործը, ինչպես երազատեսությունը, իր ողջ համոզչությամբ հանդերձ, ինքն իրեն երբեք չի մեկնաբանում և երբեք չի ունենում միանշանակ բացատրություն. այն միայն ծնում է պատկեր, ինչպես բնությունն է բույս աճեցնում, իսկ մեզ իրավունք է տրվում այդ պատկերից մեր եզրահանագումները կատարել¹⁰:

Հեքիաթի սկզբում էքզյուպերին նշում է իր կյանքի ուղղու ամենամեծ բեկումը, որ եղավ 6 տարեկան հասակում, երբ մեծահասակները, տեսնելով իր առաջին ստեղծագործությունները, խորհուրդ տվեցին օձ չնկա-

¹⁰ К, Г, Юнг, «Дух в человеке, искусстве и литературе», Минск, 2003, стр. 113.

րել ոչ դրսի, ոչ էլ ներսի կողմից, այլ հետաքրքրվել աշխարհագրությամբ, պատմությամբ, թվաբանությամբ: Այս փաստը չէր կարող աննկատ անցնել, այն իր խոր հետքը պիտի թողներ երեխայի սրտում: Եվ անգամ 42 տարեկան հասակում էության խոր շերտերում դեռևս չսպիացած վերքի ցավը պիտի զգար. «Ահա ինչպես պատահեց, որ ես 6 տարեկան հասակում իրաժարվեցի նկարչի փայլուն ապագայից: N1 և N2 նկարներով անհաջողության մատնվելուց հետո ես իմ նկատմամբ կորցրեցի հավատս» (6): Սա հոգևոր մի մեծ աղետ է, որն առօրյայում իր մասին չէր հիշեցնում: Բայց անապատում հայտնված մարդուկի պահանջը՝ գառնուկ նկարի՛ր, պիտի նորոգեր կորսատի ցավը:

Ուստի, Յունգի այն դատողությունը, թե «Մանկան մոտիվը մեր մանկությունից մոռացված որոշակի փաստերի պատկերն է»¹¹, արդեն տեսականորեն հիմնավորում է անապատում հատկապես մանկան հայտնվելը, որ պիտի հիշեցներ «նկարչի փայլուն ապագայի» ձախողման փաստը:

Ամենախոր հուզմունքով իր մտահոգությունը էքզյուսավերին պատմում է «Մարդկանց երկիրը» գրքի վերջին լուսավոր ու տիսուր էջում՝ բացատրելով, որ իրեն տանջողը յուրաքանչյուր մարդու մեջ սպանված Սոցարտն է, դաշնությամբ հայտնաբերելով, որ մարդկանց համար լավագույն տեսակները հոգատարությամբ շրջապատող պարտիզաններ չկան¹²:

Յունգը նկատում է. «Սպառնացող իրադրությունները, լինեն դրանք ֆիզիկական թե հոգեկան (դժվար չէ էքզյուսավերիի կյանքում երկուսն էլ տեսնել՝ և հոգեկանը՝ հավատի կորուստը մանուկ հասակում, և՝ ֆիզիկակա-

¹¹ Կ, Ղ, Խոնգ, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004, с. 92.

¹² Ա. դը Սենտ-Էքզյուպերի, Մարդկանց երկիրը, Երևան, 1961, էջ 236-237:

նը՝ աղետի ենթարկվելն անապատում—Հ. Ավետիսյան), առաջ են բերում աֆեկտիվ երևակայություն, իսկ քանի որ այդպիսի իրադրությունները տիպական են, արդյունքում ձևավորվում են միանման արքետիպեր»¹³:

«Փոքրիկ իշխանը» հեքիաթում հայտնված մանուկը նույն իրադրության արդյունքն էր, որում ձևավորվել էր նաև միջնադարյան տաղերգուի տեսիլքի մանուկ արքան: Իր նշանավոր՝ «Ոմանք չարախօսեն զինէն վասն նախանձու...» տաղում Կոստանդին Երզնկացին (1250-1320) նախ՝ ներկայացնում է իրեն շրջապատող թշնամական ու նախանձու միջավայրը, ապա՝ պատմում է իր տեսիլքը.



Ապոլլոն

Երբ ես հնգետասան ամաց էի մանուկ տղայ,
Ի վաճ յուսումն էի, և զիշեր մի տեսիլ տեսայ.
Մանուկ ի լուսեղեն յաթռու նստել որպես արքայ,
Նման արեգական է գեղեցիկ, որ լոյս կու տայ:

Եղաւ յանկարծակի ինձ քան խօսիլ՝ ով ուզենայ,
Այնպէս, որ ես ի յիմ խօսից շարելն զարմացայ,
Սիրով ու մեծ յուսով ես այս քանիս ի փորձ մտայ,
Զհոգիս փոխան տուի, լ'ապա ես այն հոգոյն հասայ¹⁴:

¹³ Կ, Գ, Յոնց, «Дух в человеке, искусстве и литература», Минск, 2003, стр. 204.

¹⁴ Հայ դասական քնարերգություն, հ. 2, Երևան 1986, էջ 94-95:

Ասվում է, որ երբ ինքը տասնհինգամյա պատանի էր և վանքում ուսում էր ստանում, մի գիշեր հայտնվել է տեսիլք. լուսեղեն աթոռին որպես արքա նստած էր մի մանուկ (պատանի)՝ նման արեգակին: Եվ հանկարծ օժտվել է բանաստեղծելու ձիրքով, մեծ սիրով սկսել է գրել այս տաղը՝ իր հոգին փոխանակելով այն հոգու հետ:

Ամեն մի պարզեցնելու համար այս պատճենը կազմում է տրվում. այդ են վկայում տաղի մեջբերված հատվածի վերջին՝ ընդգծված տողը և Փոքրիկ իշխանին տրված արկող, որը նկարչական համրացած ունակությունները վերստանալու դիմաց տրված «փոխան»-հատուցումն էր:

Կյանքում կայանալու, սեփական կոչումը գտնելու և կյանքի գերխնդիրը լուծելու մղումը մարդու մեջ մանկությունից են դրվում, բայց տարբեր են լինում այդ մղումն ու ձգտումը արթնացնող հանգամանքները: Եքայուպերիին մանկությունից ի վեր ողջ կյանքում ուղեկից դարձած տանջանքը պիտի «ծրագիր տար» անգիտակցական ոլորտին, որը տարիների ընթացքում թաքուն ու աննկատ պիտի փնտրեր ու գտներ խնդրի լուծումը: Միլիոնավոր մարդկանց մեջ մենության զգացումը չպիտի լքեր նրան, և նա իր խոսակցի, իր անտես երկվորյակի, իր ներքին հոգեբանի ձայնը պիտի լսեր մարդկային բնակավայրերից հազարավոր կիլոմետրեր հեռու՝ անապատում:

Բուն հեքիաթը սկսվում է հենց անապատում, Փոքրիկ իշխանի հետ անհավանական հանդիպումից: Հետո դետալ առ դետալ վերականգնվում է անցյալը՝ ըստ Փոքրիկ իշխանի պատմությունների:

Երբ ամեն կերպ փորձում ես ելք փնտրել ստեղծված իրավիճակից, որն անելանելի է ներկայանում, բանականությունդ հիշեցնում է, որ գոնե մեկ ելք կարելի է

գտնել: Բայց նույն բանականությունն էլ հրաժարվում է հավատալ դրան: ՈՒ երբ միտքը առանց լուծում գտնելու երկար պտտվում է նույն խնդրի շուրջ, սկսում է գործել ուղեղի ինքնապաշտպանական հակազդումը, երբ ուղեղն ինքն իրենից աննկատ հեռացնում է բուն պրոբլեմը, սկսում է նույնիսկ անհեթեթ հարցեր առաջադրել ու դրանց պատասխանները փնտրել, անգամ հնարավոր է՝ որոշակի ժամանակ պահանջվի՝ վերիիշելու համար ծառացած իմանական խնդիրը: Դա անհրաժեշտ նահանջ է, որ կարող է հնարավորություն տալ գտնել լուծման կարձագույն ճանապարհը:

«Առանց նախաբանի, նա այնպես միանգամից հարց տվեց,
որ թվում էր, թե նման եզրակացության էր հանգել երկար ու լուռ մտորումներից հետո.

—Եթե գառնուկը թվեր է ուտում, ուրեմն ծաղի՞կ էլ կուտի:

- Ինչ որ պատահի՝ կուտի:
- Նույնիսկ փշոտ ծաղիկնե՞րը...
- Նույնիսկ փշոտ ծաղիկները:
- Այդ դեպքում ինչի՞ համար են փշերը:

Ես այդ զգիտեի: Բացի դրանից, ես շատ զբաղված էի: Շարժիչի մեջ մի հեղուս էր փշացել, և ես աշխատում էի այդ հեղուսը մի կերպ որւրս հանել: Ես ինձ կորցրել էի. իմ դրությունը լրջանում էր. խմելու ջուր գրեթե չէր



մնացել, և ես սկսում էի վախենալ, թե իմ հարկադրված վայրէջքը կարող է վատ վախճան ունենալ:

—Ինչի՞ համար են փշերը:

Փոքրիկ իշխանը մի անգամ որ հարց էր տալիս, ել չէր հանգստանում, մինչև պատասխանը չստանար: Չենթարկվող հեղուսան ինձ համբերությունից հանել էր, դրա համար էլ ես հենց այնպես պատասխանեցի.

—Փշերը ոչ մի բանի էլ պետք չեն, ծաղիկները չարությունից են փուշ հանում:

...Այդ պահին ես մտածում էի. «Եթե այս հեղուսը հիմա դուրս չգա, ես այնպես կխփեմ, որ ջարդ ու փշուր կլինի»: **Փոքրիկ իշխանը նորից իմ մտքերն ընդհատեց.**



—Իսկ դու կարծում ես, թե ծաղիկները...

—Չէ, ես ոչինչ էլ չեմ կարծում: Ես քեզ ասացի գլուխս եկած առաջին բանը... Չե՞ս տեսնում, որ լուրջ գործով եմ զբաղված:

...

—Մի՞թե կարևոր չէ, որ գարներն ու ծաղիկները կռվում են միմյանց դեմ: Եվ եթե ես աշխարհում միայն մի ծաղիկ գիտեմ, որն աճում է իմ մոլորակի վրա, ... իսկ փոքրիկ գառնուկը մի գեղեցիկ առավոտ համարձ կուտի այդ ծաղիկը և չի էլ հասկանա, թե ինչ է անում: Սա, քո կարծիքով, կարևոր չէ:

Նա հանկարծ սկսեց հեկեկալ: Ես գործս թողեցի:
Ինձ համար արդեն ծիծաղելի էին այդ չարաբաստիկ
հեղուսն ու մուրզը, ծարավն ու մահը...» (22-24):

Եռևյամբ զննող ու նուրբ հոգեբան լինելով՝ Եքյու-
պերին տվել է հոգեբանական բոլոր անցումների ճշմա-
րիտ պատկերը:

Յունգը գրում է. «Մանուկը հնարավոր ապագան է:
Այդ պատճառով անհատի հոգեբանության մեջ այս մո-
տիվի ծագումը, որպես
կանոն, վկայում է հետա-
գա զարգացման նախա-
զգացման մասին»¹⁵: Չգի-
տեմ՝ ծանոթ եղել է արդ-
յոք Եքյուպերին
շվեյցարացի մեծ
հոգեվերլուծաբանի աշ-
խատություններին, սա-
կայն տպավորություն է
ստեղծվում, թե իր հեքիա-
թը կառուցել է ըստ նրա
տեսության: Իհարկե, ա-
սածս անհեթեթություն է,
որովհետև



Օձի հետ խաղացող երոսը
(Լուվր, Փարիզ)

գործնականում հնարա-
վոր է, ասենք, տաղաչափության օրենքներն ուսումնա-
սիրելով՝ ոտանավոր ստեղծել, բայց արվեստի մնայուն
ու բազմախորհուրդ արժեք՝ անհնար է: Պարզապես
Եքյուպերիի փոքրիկ հերոսը անվերապահորեն հաս-
տատում է Յունգի տեսությունը. նա ինքն է ուղղորդում,
առաջնորդում, հետագա անելիքը հուշում: Փոքրիկը ոչ
միայն կանխատեսում է ապագան, կամ կռահում է

¹⁵ К. Г. Юнг, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004, стр.
96.

միտքը, այլև ստիպում է այն իրագործել: Օրինակ՝ «...Ես սա բարձրածայն չասացի, այլ միայն մտածեցի: Բայց Փոքրիկ իշխանը նայեց ինձ ու շշնչաց.

—Ես էլ եմ ուզում խմել... գնանք՝ ջրիոր փնտրենք...» (67):

Կամ «...Նա ասաց.

—Ես շատ ուրախ եմ, որ դու գտար մեքենայիդ վթարի պատճառը: Հիմա դու կարող ես վերադառնալ տուն:



Ամուրը,
Ֆալկոնե, 1757, Էրմիտաժ

—Դու այդ որտեղից գիտես» (73):

Փոքրիկ իշխանի թողած առաջին տպավորությունը, որ ներկայացնում է Եքայուպերին, թույլ է տալիս մի պահ ենթադրել, որ այս գիրքը ոչ թե գեղարվեստական հեքիաթ է, անսպառ երևակայության արդյունք, այլ մի պատում՝ անապատում այցելած տեսիլքի կամ երազի, որուն հանկարծ մանուկ է հայտնվել:

«Նայեցի շուրջս և տեսա

մի տարօրինակ փոքրիկ մարդուկ, որ կանգնել ու լրջորեն նայում էր ինձ»... «Ես աչքերս լայն բաց արած նայում էի այդ անսովոր երևույթին: Չմոռանանք, որ ես մարդկային բնակավայրերից հազարավոր կիլոմետրեր հեռու էի գտնվում: Բացի դրանից, բոլորովին չէր երևում, թե այդ պատիկ տղան մոլորվել է, մահու չափ հոգնած է ու վախեցած, կամ քաղցից ու ծարավից մեռնում է: Նրա տեսքից հնարավոր չէր ասել, որ դա ամեն

տեսակ մարդկային քնակավայրերից հեռու, անմարդաբնակ անապատում մոլորված երեխա է...» (8):

Եթե հեքիաթը քննենք որպես գեղարվեստական ստեղծագործություն, որում այս կամ այն կերպ հեղինակի կենսագրության կամ հոգեբանության հայտածումը կա, ապա հեքիաթային դիպվածը կարելի է համարել սեփական մանկության այլաբանության հետ հեղինակի երևակայական հանդիպում, կամ՝ հանդիպում իրական երեխայի հետ, որը հեքիաթում գործում է որպես մանկության ամենատարօղունակ սիմվոլ: Այսպիսի քննությունը նույնական կիմնավորված, բայց միամակարդակ ու միակողմանի կլինի: Մինչդեռ հոգեբանական իրականության մեջ մանկան զաղափարը ծառայում է որպես ճշգրիտ որոշակիացման չենթարկվող հոգեկան փաստի արտահայտչամիջոց:

Մանկան արքտիպի մասին խոսելով՝ Յունգը նշում է, որ քանի որ մանուկը վերին ուժերի կողմից է պարզեված, նա, հակառակ բոլոր սպասելիքների, հաղթահարում է վտանգները: Մանուկը դուրս է եկել անգիտակցականի արգանդից, մարդկային էության խորքից, կամ, ավելի շուտ, կենդանի Բնությունից: Նա մեր գիտակցության



Մանուկ Սովորես Նեղոսի պիեներին,
Էստուա և Խուու 1649 Էռմիտաժ

սահմանափակ տարածությունից դուրս գտնվող կենսական ուժերի մարմնավորումն է, նա միաբեռ գիտակցությանն անտեսանելի ուղիների ու հնարավորությունների կերպարանավորումն է: Մանուկը Բնության խորքային սկիզբների ամբողջականության սիմվոլն է: Նա յուրաքանչյուրին բնորոշ հնքնահրականացման ամենաուժգին, անհաղթահարելի ցանկության անձնավորումն է: Նրա մեջ դրված է, եթե կարելի է այդպես արտահայտել, այլ կերպ վարվելու անընդունակությունը, որը գինված է բնության բոլոր ուժերով ու բնագդներով՝ որպես հակակշիռ գիտակցությանը, որն անառկելիորեն դառնում է այլ կերպ վարվելու իր թվացյալ ընդունակության գոհը¹⁶:

Անապատում հայտնվելն ու տեսիլքը միայն հեքիաթի եղելությունները չեն: Սենտ-Էքյուպերիի կյանքի հայտնի դրվագներից էր անապատում վթարի ենթարկվելը, իսկ անապատում հայտնվածին կարող են ուղեկցել միրաժները: Տեսիլքային ապրումը, ըստ Յունգի, կուեկտիվ անգիտակցականի ձևերից է: Գիտակցության մթագննան ժամանակ (Երազ, հոգեկան հիվանդություն և այլն) մակերևույթին հայտնվում են հոգեկան կերպավորումներ, որոնք իրենց վրա են կրում նախամարդու հոգեկան վիճակի բոլոր նախանշանները, ընդ որում՝ ոչ միայն ձևով, այլև իմաստային բովանդակությամբ, որ երբեմն ստիպում է մտածել, թե մեր առջև գաղտնի վարդապետության դրվագներ են: Այստեղ անպայմանորեն գործում է միֆը:

Միֆական իրականության մեջ ֆիգուրների հասակը ոչ մի առնչություն չունի կենսաբանական հասակի հետ: Առասպեկտում նաև պատահին կամ ծերունին չեն գտնվում կյանքի տվյալ փուլում, նրանց կերպարում

¹⁶ К. Г. Юнг, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004, с. 103.

արտացոլվում է աստծո էությունը: Հենց աստծո հավերժական բնույթը բացառում է ցանկացած կապ կենսագրության հետ: Առասպելաբանությունները, հատկապես այն միֆերը, որոնցում ներկայացվում է առաջին ծնունդը, «ավետում են ոչ թե ինչ-որ մարդկային էակի հայտնությունը, այլ ծնունդը աստվածային Տիեզերքի կամ համապարփակ Աստծո»¹⁷:

«Կյանքը շարժումն է դեպի ապագա: Այդ իսկ պատճառով հասկանալի է, թե ինչու միֆոլոգիական փրկչի ռերում այնքան հաճախ հանդես են գալիս աստվածամանուկները: ...



Երոս, Երմիտաժ

«Մանուկը» նշում է անձի գալիք փոփոխությունների ուղին:

Անհատականացնան պրոցեսում անձը նախապատրաստում է մի կերպար, որ առաջ

է գալիս իր գիտակցական ու անգիտակցական տարրերի համադրման արդյունքում: Այլ խոսքով, այդ խորհրդանշանը միավորում է հակադրությունները, ամոքիչ միջնորդ է, նա արարում է ամբողջականությունը»¹⁸:

Մեր տարբերակված գիտակցությանն անընդհատ սպառնում է սեփական արմատներից կտրվելու վտանգը, այդ պատճառով այն կոնպենսացիայի կարիք ունի, ինչը կարող է տալ դեռևս գոյություն ունեցող մանկությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդն

¹⁷ К. Г. Юнг, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004, с. 14.

¹⁸ Նույն տեղում стр. 96.

ունի սեփական արմատներից իրեն հեռացնելու զարգացած ունակություն, կարելի է համոզված ասել, որ նա իր վտանգավոր միակողմանիությամբ և անքննադատությամբ կարող է ներքաշվել աղետի մեջ:

«Անպաշտպան լինելը, լքվածությունը, վտանգների ենթակա լինելը և այլն, բոլոր այս հասկացությունները վերաբերում են մանկան ակունքներին և նրա գաղտնի ու հրաշալի ծնունդին: Դրանք բնութագրում են որոշակի ստեղծագործական բնույթի հոգեկան փորձ, որի արդյունքը նոր ու մինչ այդ անհայտ բովանդակության ծագումն է: Այդպիսի պահերի մարդու հոգեբանության մեջ ստեղծվում է կոնֆլիկտային իրավիճակ, որ անելանելի է ներկայանում, համենայն դեպս, գիտակցության համար: Բայց այդ հակադրությունների կոնֆլիկտը անգիտակցականին թույլ է տալիս ստեղծել մի երրորդը՝ իր բնույթով իշացիոնալը, այնպիսինը, որ չի սպասում ու չի հասկանում գիտակցականը, որովհետև այն ո՞չ միանշանակ «այո» է, ո՞չ էլ «ոչ», և երկուսի կողմից էլ մերժվում է: Չէ՞ որ գիտակցականին հայտնի չէ մի այնպիսի բան, որ դուրս լինի հակադրությունների շրջանակից և կարողանա դրանք միավորել: Բայց քանի որ կոնֆլիկտը լուծել հնարավոր է հակադրությունների միավորման ձանապարհով (հենց դրան է ձգտում գիտակցականը), ուրեմն՝ այստեղ ակնարկվում է ստեղծագործական ակտը և նրա նշանակությունը: Նշանակալից, բայց անհայտ բովանդակությունը միշտ կախարդում է գիտակցական միտքը: Նոր ուրվագիծը ծնվող ամբողջականությունն է: Այդ պատճառով բոլոր միավորող սիմվոլների իմաստը կապված է փրկության հետ: Իսկ «մանուկը» ծագում է որպես սիմվոլիկ

բովանդակություն՝ հստակ առանձնացված կամ նույնիսկ մեկուսացված իր ակունքից (մորից)»¹⁹:

Կրոններն իրենց հիմքում հենց այսպիսի սիմվոլներ են հաստատում՝ սկսած հնագույն ազգերի դիցարաններից մինչև համաշխարհային կրոնները։ Աստվածանանուկները ծնվում են ու շատ շուտով լքվում ծնողների, կամ՝ գոնե հոր կողմից (Ապոլոն, Հերմես, Հեփեստոս, Դիոնիսոս):



«Մեռած տղան դելֆինի վրա»
Լորենցո Լորենցեսոն

Հաճախ նրանց չեն ընդունում աստվածները, նրանք որք են ու անտուն, բայց միաժամանակ այս աշխարհը նրանց տունն է։ «Ինձ միշտ թվում է, թե իմ տանն եմ», – ասում է Փոքրիկ իշխանը (21):

Հայկական դիցարանում հրաշալի ու անբնական էր Վահագնի ծնունդը, այդ մանուկը փրկություն բերող Վիշապաքաղն էր*։

¹⁹ К. Г. Юнг, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004, стр. 100.

* Ի դեպ, «Վիշապաքաղ» մակդիրը հակասություն է ստեղծում ներկայացնելով Վահագնին մի կողմից՝ որպես վիշապների դեմ մարտնչողի, մյուս կողմից՝ որպես վիշապայծի։ քառ՝ այժ, ինչպես «այծքաղ», «եղջերվաքաղ» բառերում։ այսպես է ստուգաբանում բարը Հրայրա Աճայանը (տե՛ս Հր. Աճայան, Հայերենի արմատական բառարան)։ Մայրիշխանության շրջանում վիշապը պաշտա-

Հրաշալի էր նաև Հիսուսի ծնունդը, բայց ավելի հետաքրքիր է այն հանգամանքը, որ թեև Հիսուսի մանկության մասին Ավետարանը գրեթե չի խոսում, մանավանդ որ նրա գործունեությունն ուշ է սկսվում՝ Երեսուներեք տարեկան հասակում, սակայն զարմանալիորեն արվեստի բոլոր բնագավառներում հաճախ նա ներկայացվում է մանուկ հասակում, հատկապես Վերածննդի շրջանի գեղանկարչության մեջ:



Տիրամայրը մանկան հետ,
Լեռնարդո դա Վինչի

Դարձականությունը:
Դարձականությունը կերպում է մանկան արքետիպը՝ որպես միավորող սիմվոլ, որպես ծնվող ամբողջականություն:

Նա գալով անհայտ մի աշխարհից՝ կողմ չէր իրականության մեջ առկա հակադիր ոչ մի կողմին. չարդարացնելով մեղավոր կնօջը՝ չդատապարտեց նրան, չմերժելով Մովսեսի օրենքը՝ չհաստատեց: Այդպիսով՝ նա յուրաքանչյուր մարդու ներքին հակասությունը լուծելու համար ուղարկված ֆիգուր է՝ միֆոլոգիական փրկիչ, իռացիոնալ մի կերպար, որը հավիտենական է և կա մարդկության ծննդից ի վեր: Բայց հակադրու-

մունքի կենդանի էր՝ որպես հողի ու ամպրոպի խորհրդանիշ: Հայրիշխանության շրջանում սիմվոլները պիտի փոխվեին, դրանց դեմ պիտի պայքարեր արական մի աստվածություն՝ ինքը դաշնալով դրանց կրողը:

թյունները սինթեզելու իր մեջ գործը կատարելուց հետո այդ իռացիոնալ ֆիզուրը պիտի մեռնի, որպեսզի գիտակցությունն իր բնական ընթացքը ստանա (այլ կերպ չի լինում):

«Մարդու մեջ հավերժամանուկը ինչ-որ հուզմունք անհանգստություն է, որն անհնար է նկարագրել, ներքին մի խոչընդոտ, միաժամանակ՝ աստվածային նախանշան: Այն ինչ-որ անորսալի մի բան է, բայց որը որոշում է անձի վերջնական արժեքը կամ ոչնչությունը»²¹:

«Ամենը, ինչ մարդ պիտի լինի, բայց չի կարողանում, ամենը, ինչ պիտի անի, բայց անկարող է, շարունակում է ապրել նրա գիտակցության կողքին՝ որպես միֆոլոգիական ֆիզուր և նախազգացման կրոնական պրոյեկցիա, ինչն ավելի վտանգավոր է, քան անգիտակցական բովանդակությունը»²²:

Վերադարձնալով Փոքրիկ իշխանի հետ հանդիպման պահի՝ շփոթմունք ու ապշանք արտահայտող նկարագրությանը, ապա՝ նաև Փոքրիկ իշխանի ամենալավ «դիմանկարին», կարելի է ասել, որ դրանք հիմք են տալիս ենթադրելու, որ Փոքրիկ իշխանը աստվածային էակ է, մեկն այն առասպելական հերոսներից, որոնց ոչ թե մարդկությունը ստեղծել է երևակայությամբ, այլ զարմանքով է դիմավորել նրանց ծագումը իր էության մութ ու անհայտ խորքերից՝ նման այն կայծքարին, որի ներսում քնած կայծը կարող է արթնանալ հարվածից՝ ամեն անգամ կերպավորելով հրաշքը:

«Միֆոլոգիական կերպարի ալեգորիկ նշանակությունը, ինչպիսին բոլոր աստվածամանուկների հավերժական կերպարն ու բնության երևույթների ալեգորիկ

²¹ К. Г. Юнг, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004, стр. 113.

²² Նույն տեղում՝ стр. 101.

նշանակությունն են (արևի ծագում, մանկան ծնունդ), փոխկապակցված են և հավասարաթեք: Հավերժամանուկը ծագող արևի և, միևնույն ժամանակ, նորածնի այլաբանությունն է: Ներկայացնելով մեզ երկու կերպարներ՝ ծագող արևի և միֆոլոգիական երեխայի, աշխարհն ինքն է պատմում իր ծագումը, ծնունդն ու մանկությունը»²³:



²³ К, Г, Юнг, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004, стр.

53.

Փոքրիկ իշխանի դիցաբանական գծերը

Դարբնության, Երկրագործության, նավագնացության ու
ձանապարհորդության, հովվության, կախարդության ու
արվեստների հովանավոր աստվածներն ու Փոքրիկ իշխանը

Փոքրիկ իշխանն ունի երեք հրաբուխ (Երկուսը՝
գործող, մեկը՝ հանգած), որոնք հասնում են նրա
ծնկներին, և որոնք ամեն օր նա մաքրում է, մինչդեռ
«մենք՝ Երկորի Վրայի մարդիկս, շատ փոքր ենք և չենք
կարող մաքրել մեր հրաբուխները» (28):



Ահա, ներկայանում է մանուկը, որ միևնույն
ժամանակ հսկա է: Եվ՝ ոչ սովորական հսկա, այլ՝ մարմ-
նավորումը հռոմեական Վուլկանի կամ հունական
Հեփեստոսի, որն իր կյանքը չէր անցկացնում խրախ-
ճանքների մեջ, այլ սիրում էր ֆիզիկական աշխատան-
քը: Սկզբնապես Հեփեստոսը մեծարվել է որպես
ստորերկրյա կրակի աստված՝ գործող հրաբուխների
Երկրներում, և որպես դարբնության աստված՝ ար-

հեստագործական կենտրոններում: Նրա դարբնոցը գտնվում էր Եթուան ընդերքում:

Աշխարհը Փոքրիկ իշխանի համար շատ փոքր է. ցանկացած պահի նա կարող է վերջալուս դիտել: Հրաբուխներից մեկը, որ հանգած է, նրան որպես աթոռ է ծառայում: Առասպելաբանություններում աստծոն և լեռան միևնույն կապը կա՝ պաշտամունքային լեռը՝ որպես աստծոն նստավայր կամ գահ: Հնդեվրոպական միֆերում, օրինակ, լեռը ամպրոպի ու կայծակի աստծոն բնակավայրն է:



Այն, որ Փոքրիկ իշխանի կերպարը նաև ամպրոպի աստվածության աղոտ առկայծումներ ունի, կարելի է գտնել հեքիաթի տեքստը ուշադիր կարդալով: Մենտեքյուպերին գրում է, որ երբ անապատում իրեն արթնացրեց ինչ-որ մեկի բարակ ծայնը, ինքն այնպես վեր թռավ, «կարծես ամպրոպ էր ճայթել» (7): Ինչպես հայտնվելը, այնպես էլ հեռանալն անապատից անմիջականորեն կապվում է կայծակի և ամպրոպի հետ,

որովհետև երբ Փոքրիկ իշխանը վերջին քայլը կատարեց, «կարծես մի դեղին կայծակ շողաց նրա ոտքերի մոտ» (78):

Պատահական չէ, որ հեքիաթի այս փոխաբերությունն իր մեջ նույնացնում է կայծակն ու օձը: Հնդեվրոպական հնագույն առասպելներում երկնային այդ երևույթը մարմնավորող աստվածությունը ներկայացվում է վիշապաքաղի տեսքով:

Ընդ որում, Վիշապամարտիկ հերոսը կրում է հենց վիշապի հատկանիշները, ինչպես մեր Վահագնը:

«Վիշապաքաղ»
բարի «քաղ» արմատը
ոչ թե նշանակում է
քաղող, հանող կամ
սպանող, ինչպես ա-
ռասպելը մեկնելիս
բացատրում է Մանուկ
Աբեղյանը, այլ՝ այժ:
Այսպիսի ստուգաբա-
նություն է տալիս

«քաղ» բարին Հրազյա Աճառյանը՝ այդ արմատից կազմված մի շարք բառերի կողքին բերելով նաև «եղջերվաքաղ» բառը, որ առասպելական կենդանու (կիսաեղջերու-կիսաայծ) անունն է: Ստացվում է՝ վիշապների դեմ կռվող Վահագնը վիշապայծ է:


Նոր գաղափարախոսությունը գալիս է հերքելու, մերժելու իինը, միաժամանակ յուրացնում հնի արտաքին տարբերանշանները. արևապաշտությանը փոխարինած քրիստոնեությունը պիտի Քրիստոսին «արդարության Արեգակ» կոչեր, և շարականի տեքստը այսօր



Յերակլեսը սպանում է օձերին

Էլ պիտի հնչի որպես արևի հնագույն հիմն: Երբ քրիստոնեությունը բերեց իր մշակույթը, այն սերմանելու և աճեցնելու ամենահարմար վայր ընտրեց հեթանոսականի ավերակները: Իրականում նոր տիկերում պահվեց հին գինին:

Հեքիաթում հայտնված օձը նույն ինքը՝ Փոքրիկ իշխանն է, կամ նրա՝ որպես աստվածության, ատրիբուտը կամ հիպոստաք (կրկնօրինակ): Էքցուապերիի կատարած նկարներում (և ոչ միայն նկարներում, այլև հենց տեքստում՝ «Ես քանդեցի նրա ոսկեգույն Վզնոցը» (73)) Փոքրիկ իշխանը պատկերված է ոսկեգույն օձաձև ժապավեն-փողպատով, որը հուշում է նրա «ազգակցական կապը» ամպրոպածին և կայծակը մարմնավորող այդ կենդանու հետ:



Օձը հնագույն միֆոլոգիաներում ունի խթոնիկ բնույթ, այն կապվում է հողագործության հետ, ունի սերտ կապ անձրևի հետ, պարզեցն է պտղաբերություն, կամ մարդկանց հաղորդակից է դարձնում անդրաշխարհի հետ: Նաև խորհրդանշում է իմաստնություն (Աթենաս-Պալլաս) և հարություն (Ասկլեպիոս): Ի դեպ, Ասկլեպիոսին, որ Ապոլլոնի որդին էր,

հույների բժշկության աստվածը, աստվածների սահմանած կարգը խախտելու՝ մարդկանց բժշկելու և հարություն տալու համար Զևսը սպանում է կայծակի հարվածով: Ասկլեպիոսը պատկերվել է գավազանին հենված, որին փաթաթվել է օձը:

Օձը «ոսկե ապարանջանի նման փաթաթվեց Փոքրիկ իշխանի ոտքի կոճիկին» (53): «Պատի տակ, գլուխը Փոքրիկ իշխանի կողմը ձգած՝ օղակ-օղակ փաթաթվել էր մի դեղին օձ» (73):


Միֆը, առասպելը արձանագրում են մարդկության պատմությունն ու նրա ընթացքը: Եվ նրանցում ոչինչ պատահական չէ:

Պատահական չէ, որ Աստվածաշնչում իմացության ծարի պտուղն առաջինը համտեսողը Եվան էր, իսկ նրան գայթակղողը՝ օձը: Պատմությունից հայտնի է, որ նախնադարյան համայնական հասարակարգում տղամարդիկ զբաղվում էին որսորդությամբ, իսկ կանայք՝ հավաքչարարությամբ, և տրամաբանական է, որ Վերջիններս էին հայտնաբերում նոր ուտելի պտուղներ ու բույսեր: Երկրագործությունը կապվում է մայր աստվածության հետ, որի խորհրդանշաներն են բույսը, ծաղիկը, պտուղը, օձը: Նույնպես պատահական չէ, որ հողագործ Կայենն է սպանում անասնապահ Արելին: Որքան էլ այս երկու մշակույթները՝ հողագործությունն ու անասնապահությունը, գոյություն են ունեցել գորգահեռաբար, նրանց արմատները տարբեր սկզբունքներ են մատնանշում (նստակեցություն և քոչվորություն):

Համեմատաբար վաղ շրջանում Ապոլլոնը համարվել է արեգակնային լույսի աստվածություն: Հունական կրոնի զարգացման հետ միաձուլվել է Հելիոսի պաշտամունքին և նոյնացվել նրա հետ: Իսկ որպես արեգակնային աստվածություն՝ ունի նաև Երկրագործական նշանակություն, ինչը հետագայում նահանջում է

Երկրորդ պլան՝ տեղը գիշելով Ապոլլոնի՝ որպես ռազմիկ աստծո ունեցած նշանակությանը:

Մարդկանց հանկարծամահ լինելը կապում էին Արեգակ-Ապոլլոնի արձակած նետի հետ: Ապոլլոնն ընկալվել է որպես մարդկանց, նրանց հոտերն ու բերքը



պահպանող աստվածություն: Նա նաև արվեստները հովանավորող աստված է՝ ինը մուսաների առաջնորդը: Նրա ատրիբուտներն էին քնարը, աղեղը կամ կիթառը և այծենի թիկնոցը: Աթենքում ու Հունաստանի մյուս քաղաքներում Ապոլլոնին պաշտել են որպես ճանապարհների, ճանապարհորդների ու ծովագնացների պահապանի: Նրա հետ Ասկլեպիոսի ազգակցությունն ու Վերջինիս՝ բժշկության աստված լինելու մասին առասպելը կապված են Ապոլլոնի՝ աղետները խափանող աստվածություն լինելու մասին պատկերացման հետ:

Ուրեմն՝ անապատում վթարի ենթարկված ուղևորին, տրամաբանական է, պիտի օգնելու գար հենց Ապոլլոն-Փոքրիկ իշխանը: Բայց ինքնաթիռի վթարի հետևում բացվում է ավելի էական մի վթար, որ տեղի էր ունեցել 30 տարի առաջ, և նախևառաջ այդ վթարի հետևանքները վերացնելու համար էր օգնական պետք: Բայց անհնար էր օգնել՝ առանց օգնության դիմաց

կանխավ հատուցում ստանալու: Այդպես են «վար-վում» բոլոր աստվածները մարդկության ծննդից ի վեր. նրանք իրենց յուրաքանչ-յուր «ծառայության» դի-մաց ունեն զոհաբերության «սահմանված» չափ (բավական է վերծանել «Խաղողի դարպասների» արձանագրությունը):

«Յաշտ» բառը գրաբարում նշանակել է «զոհաբերություն», «զոհ», «յաշտ առնել»՝ «զոհ մատուցել»: Թեև «հաշտվել» բառը գրությամբ տարբերվում է «յաշտ»-ից, բայց երկուսն էլ, բացի նրանից, որ նույն արտասանությունն ունեն, ամենայն հավանականությամբ, նաև նույն ծագումն ունեն: Այդ է հուշում իմաստային դաշտը. ի՞նչ է հաշտությունը, եթե ոչ յուրատեսակ զոհաբերում: Բայց եթե սովորաբար աստվածային ու մարդկային աշխարհների առնչությունն իրականանում է երկու գործողությամբ՝ զոհաբերել և ստանալ, ապա Փոքրիկ իշխանն այդ հարաբերությունն իրականացնում է մեկ գործողությամբ, այնպես, որ երբ զոհաբերողին թվա, թե տալիս է, իրականում վերցնի: Փոքրիկ իշխանի պահանջած հատուցումը հենց նրա տված օգնությունն էր: Դա նույնն է, եթե համար բժիշկը ամեն գնով հասնի նրան, որ նախքան բուժումն սկսելը համը երեխան պատասխանի «ի՞նչ է անունդ» հարցին (պահանջված գառնուկը նկարելու պահին նկարչական անտեսված կարողության վերադարձը):

Աղվեսի հետ հանդիպած դրվագում պարզվում է Փոքրիկ իշխանի կերպարի և մեկ ուշագրավ կողմ, ավելի շուտ, ի դեմս Փոքրիկ իշխանի՝ ի հայտ է գալիս



Երբեմնի այն դիցաբանական կերպարը, որի տարրալուծման արդյունքում առաջ են եկել մի խումբ աստվածություններ՝ իրենց ինչ-ինչ ֆունկցիաներով հաճախ համընկնելով միմյանց հետ: «Քո ոտնաձայները ես հազարավոր ոտնաձայներից կտարբերեմ: Մարդկանց



Յովիաննես Մկրտիչը գառնուկի հետ,
Բարտոլոմէ Էստերան Մուրիլիո
(1618-1682)

ոտնաձայները լսելով՝ ես միշտ փախչում եմ և թաքնվում գետնի տակ: Բայց քո քայլվածքը երգի պես ինձ կկանչի, և ես դուրս կգամ իմ թաքստոցից», -ասում է աղվեսը, ու մեր առջև կարծես հայտնվում է հովիկ աստված Ապոլլոնը: «Երբ Ապոլլոնը արոտավայրում նվազում էր իր եղեգնյա շվիով կամ ոսկեղեն կիթառով, վայրի գազանները, նրա նվազով հմայված, դուրս էին գալիս անտարի թափուտից»²⁴:

Ապոլլոնն ընկալվել է

իբրև մարդկանց, նրանց հոտերն ու բերքը գայլերից, մկներից և այլ կենդանիներից պահպանող աստվածություն: Ապոլլոնի պաշտամունքի խոր հնության և տոտեմական ծագման մասին են վկայում

²⁴ Ն. Ա. Կուն, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Երևան, 1956, էջ 44:

նրա բազմաթիվ մականունները՝ Ապոլլոն Գայլային, Մկնային և այլն: Սկզբնական շրջանում պատկերվում էր հենց այդ կենդանիների կերպարանքով, իսկ հետագայում նրանցից պաշտպանում էր մարդկանց հոտերն ու բերքը:

Այս երկակիությունը ի հայտ է գալիս հեքիաթի երկրորդական պլանում, որն ամենակին էլ ուշադրություն չի գրավում: Եթե իշխանն ուզում էր հրաժեշտ տալ թագավորի մոլորակին, վերջինս փորձում է համոզել, որ նա մնա որպես արդարադատության նախարար և դատի ու անպայման ներում շնորհի մոլորակի միակ բնակչին՝ պառավ առնետին (34):

Ապոլլոնը նաև ճանապարհորդների ու ծովագնացների պահապանն էր: Եթե Փոքրիկ իշխանի կապը Ճանապարհորդության հետ պարզորոշ կարելի է ներկայացնել՝ սկսելով հենց իր մոլորակից հեռանալուց, ապա թվում է՝ որևէ կերպ հնարավոր չէ նրան կապել ծովագնացության հետ, մանավանդ որ հեքիաթի դեպքերը ծավալվում են ծովի հակապատկերում՝ անապատում: Բայց հենց այստեղ էլ գտնվում է ծովի հետ կապը: «**Նավարեկյալն** անգամ իրեն այնքան միայնակ չէր զգա օվկիանոսում, որքան ես»(7),— այս համեմատությամբ գիտակցությանն առաջին հուշումն է տալիս հեղինակը: Ծովի երկրորդ պատկերը արթնացնում է օձը՝ անապատում հայտնված փոքրիկին դիմելով. «**Քեզ ուզածդ նավից** ավելի հեռուն կարող եմ տանել» (53): Իսկ ծովի երրորդ տեսիլքը պարունակում է պարզ մի փոխաբերություն՝ «լուսնի լույսով լուսավորված **ալիքընդ** ավազը»:

Հեքիաթում մանուկը, ջուրը և երգը ինչ-որ անխգելի կապ ունեն: «Գիտե՞ս ինչո՞ւ է անապատը լավ: Նրա մեջ ինչ-որ տեղերում աղբյուրներ են թաքնված» (69), «Լուս՞ում ես, մենք ջրիորին արթնացրինք, և նա

Երգեց» (70), «Ես ուզում եմ այդ ջրից մի կում անել», «Ես դույլը մոտեցրի նրա շրթունքներին: Նա խմում էր աչքերը փակ: Նրա համար դա ոնց որ ամենագեղեցիկ խնջույքը լիներ: Դա հասարակ ջուր չէր: Այդ ջուրը ծնվել էր աստղերի տակով անցնող երկար ճանապարհից, չարխի ճռճռոցից և իմ ձեռքերի ճիգից» (70), «Ոնց որ ջուրը: Երբ դու ինձ տվեցիր խմելու, ջուրը կարծես երաժշտություն լիներ... և դա չարխից ու պարանից էր...» (74), «—Այս, ճուտիկ, ճուտիկ, ինչքա՞ն եմ սիրում քո ծիծաղը... —Այ, հենց դա էլ իմ նվերն է... Դա կիհնի ոնց որ ջուրը» (76):



Սա հեքիաթի ամենահուզիչ ու ամենախորհրդավոր պահերից մեկն է, որ հիշեցնում է ինչ-որ միստերիայի մասնակից լինելու համար կատարվող հատուկ հաղոր-

դության ծես՝ ջրով, աստղերի լուսով, չարխի ճռօց-երաժշտությամբ (միստերիաներին մասնակցում են միայն հաղորդվածները: Ի դեպ, Հերմեսին նվիրված տոնակատարությունները կրում էին միստերիաների բնույթ):



Ապոլլոնը քնարով

Յունգը հանգում է մի եզրակացության, որ նախքան դելֆինի, Ապոլլոնի և քնարի կապը եղել է ավելի մեծ ու նախնական մի կապ, որ տիեզերական բնույթ ունի. դա ջրի, մանկան և երաժշտության կապն է²⁵:

(Ակնհայտ է չարխով ջրհորի և քնարի նմանությունը):

Հնուց ի վեր Հունաստանում,

ապա՝ Հին Հռոմում, տարբեր մրցույթների հաղթողներին դափնեպսակ էր շնորհվում (ունենք «դափնեկիր» բառը, որ առաջացել է լատիներեն laureatus բառից): Տոնակատարությունների ժամանակ Ապոլլոնին նվիրաբերվում էին դափնու ճյուղեր: Ըստ առասպելի՝ Ապոլլոնը սիրահարվում է գետի աստվածության դուստր Դափնեին, իսկ նա, խնդրում է աստվածներին փրկել իրեն Ապոլլոնի սիրահետումից:

Աստվածները լսում են նրա խնդրանքը և նրան վերածում սրբազն ծառի՝ մշտադալար դափնու: Ապոլլոնը



²⁵ К, Г, Юнг, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004, с.68.

պատկերվել է դափնեպսակով: Փոքրիկ իշխանի ամենահայտնի նկարում այդ աստվածամանուկի կուրծքը զարդարված է վարդով:

Վերը նշվեց, որ հեքիաթի օձը նույն ինքը՝ Փոքրիկ իշխանն է կամ նրա հիպոստասը:

Երբ երկրի վրա Փոքրիկ իշխանն առաջին անգամ հանդիպեց օձին և զարմացավ, որ այն հազիվ իր մատի հաստությունն ուներ, օձը պատասխանեց. «Բայց իմ մեջ ավելի շատ հզորություն կա, քան նույն իսկ թագավորի մատի մեջ» (53):

Նա կարող է ուզածդ նավից հեռուն տանել, նա ում դիպչի, կվերադարձնի այն հողին, որից ծնվել է, նա լուծում է բոլոր հանելուկները: Խոսում է ինքը՝ ամենազոր Մահը:

Նա իշեցնում է Մովսեսի գավազանը, նա նաև ցանկացած հագույց անտես բացելու կարողություն ունեցող

Հերմեսի գավազանն է, որ աստծվածներին ու մարդկանց կարող է ընկողմել քնի մեջ կամ արթնացնել քնից: Հունական դիցարանում Հերմեսը մեջալների հոգիներին ուղեկցում է Հադես: Դասական և հելլենիստական շրջանում Հերմեսը պատկերվել է պատմուճանով և քղամիդով, գավազանով, որին օձեր են փաթաթված, երբեմն՝ գլխին թևավոր սաղավարտ, հազին՝ երկարա-



Հերմես

Ճիտ կոշիկներ, որոնք նույնպես հաճախ թևավոր էին: Հեքիաթի բոլոր դրվագները միահյուսվելով և հեղինակի կատարած նկարների հետ համադրվելով՝ առաջացնում են նույն մտապատկերը: Իսկ Եթե ավելացնենք, որ Հերմեսը եղել է նաև հոտերի հովանավոր աստված, որ ծնվելուն պես առևանգել է Ապոլլոնի հոտերն ու թաքցրել այնպես, որ ոչ ոքի չի հաջողվել գտնել (ի միջի այլոց, Հերմեսի անունից է ծագել «հերմետիկ» բառը), և պատկերվել է՝ ուսերին զառնուկ՝ որպես «բարի հովիվ»*, մշուշի պես կցնդեն հարցերը, և անապատում՝ դեռևս քնի մեջ ընկղղմված օդաչուին կարթնացնի չարաձի մանուկ Հերմեսը՝ «ինձ համար մի զառնուկ նկարիր» պահանջով:

Հերմեսը եղել է նաև ուղևորներին հովանավորող աստված՝ կատարելով Ապոլլոնի նշված ֆունկցիան:

Եթե Ապոլլոնի անվան հետ կապվում է գուշակության արվեստը, ապա Հերմեսը կախարդության հովանավորն էր: Այս հատկությունների արձագանքը կա և հեքիաթում: Երբ Փոքրիկ իշխանն ասում է. «Ես շատ ուրախ եմ, որ դու գտար մեքենայիդ վթարի պատճառը: Հինա դու կարող ես վերադառնալ տուն», հեքիաթի մեծահասակ հերոսը զարմանում է, թե որտեղից նա գիտի, «Ես հենց ուզում էի ասել, որ հակառակ իմ սպասածի՝ ինձ հաջողվեց մեքենան կարգի գցել» (73):

* «Բարի հովիվը» մեզ ներկայանում է տարբեր կերպարներում՝ աստվածաշնչան Դավիթ, Մովսես, Յովհաննես Սկրոտիչ, Յիսուս, հայկական էպոսի մանուկ Դավիթ, Ապոլլոն և այլն: Մարդկության ամենասիրելի աստվածները հովիվներ են: Բայց հետաքրքիր է, որ մահկանացու հովիվները հնագույն պատկերացումներում ինչ-որ միստիկ կերպարներ են, որոնք կամ աստծոն ծնունդի վկան են լինում, կամ առաջինն են լսում այդ լուրը. նրանք են ճշգրիտ կարդում տիեզերքի նշանները, նրանք են մարդկանց հաղորդում աստծո պայմանները:

Հերմեսը նաև Օլիմպոսյան աստվածների լրաբերն էր, Զևսի մունետիկը, բանագնացների հովանավորը:



Թեև Հերմեսի և աղվեսի կապը փաստերով չեմ կարող հիմնավորել, բայց կարծում եմ, որ բանահյուսության ու գրականության մեջ, ժողովրդական բանարվեստում ու ավանդույթներում աղվեսի կերպարը հաճախ հանդես է գալիս հերմեսյան նկարագրով։ Աղվեսի հետ կապված առասպելական-բանաստեղծական ավանդույթներում սիմվոլիկ նշանակություններով ծևավորվել է միասնական ու կայուն ինաստների համախումբ՝ խորամանկություն, ձարպկություն, խելամտություն,

քծնանք, գողություն, խաբեություն, երեսպաշտություն, զգուշություն, համբերություն, եսասիրություն, Վրիժառություն, սպրդանք, ազահություն, մենակություն։

Միֆոլոգիական բառարանը տեղեկացնում է, որ հիմնականում աղվեսը չի կապվում բարձր մակարդակի միֆոլոգիական կերպարների հետ, միայն հանդես է գալիս որպես Դիոնիսոսի հիպոստաս և ձապոնական

բերքի ու բրնձի աստվածուիի Ինարիի լրաբեր, որ տիրապետում էր կախարդիչ հնայքների և մարդկային կերպարանք ստանալու ունակությանը: Աղվեսն ունի նաև մոգական հնարավորություններ: Չինական հեքիաթային ավանդույթով՝ նա 100 տարեկան հասակում վերածվում է կախարդի, 1000 տարեկանում ընկնում է երկինք և դառնում երկնային աղվես՝ կազմված Կարիճ համաստեղության երեք աստղերից: Կա նաև Աղվես համաստեղություն: Աղվեսն իր երկակի բնույթով՝ կախարդ և ծաղրող-խաբեբա, դարձել է կենդանական էպոսի ճկուու ծևերի՝ բանահյուսական-հեքիաթային և գրական, հերոսներից մեկը:



Արևամտյան Եվրոպայում, սկսած 11-րդ դարից, ձևավորվում է էպոս Ռենարի մասին: Հատուկ դեր է խաղացել իին ֆրանսիական «Աղվեսի մասին Վեպը»: 12-րդ դարի վերջին հայտնվեցին այս թեմայի գերմանական, ապա 13-րդ դարի կեսերին՝ նիդեռլանդական վերամշակումները, որոնք որպես աղբյուր ծառայեցին գերմանական «Ռայնեկե աղվես»-ի համար²⁶.

²⁶ Мифы народов мира, т. 2, срп. 57.

Կարծում են՝ Երկնային լուսատուների հետ կապված մոտիվները, հատկապես եթե համապատասխան համաստեղություն կա, անպայմանորեն ավելի հին են, քան հեքիաթները, դրանց ակունքը առասպելներն են։ Բոլոր ժողովուրդների ֆոլկորներում հատուկ տեղ է զբաղեցնում աղվեսի մոտիվը։ Աղվեսը իր յուրօրինակ դերն է խաղում նաև հայկական բանահյուսության ու գրականության մեջ։ Բացի այդ մոտիվի առկայությունից բազում հեքիաթներում, ունենք կատակերգեր, ինչպես «Ի վերայ աղուէսին» կատակերգը (մշակել է նաև Հովհ. Թումանյանը)։

...Աղուէսն հագեր լուրջ ու դեղին,
Ի շուրջ կու գայր բոլոր գեղին,
Աչք է դրեր մամկայ եղին.
Սիրո՞ւն աղուէս՝ ագին ծաղի՞կ։

Աղուէս նստեր վերայ դիզին,
Չագին կրեր վերայ վզին,
Աչք է դրեր մամկայ ընկզին.
Սիրո՞ւն աղուէս՝ ագին ծաղի՞կ...

...Ո՞վ աղուէսուկ, փոքրիկ գազան,
Ոտերդ կարձ ու խիստ վազան,
Շներն ամեն քեզ չի հասան.
Սիրո՞ւն աղուէս՝ ագին ծաղի՞կ²⁷։

ՈՒՆԵՆՔ «Աղվեսագիրքը» (Վարդանա առակներ), մի բանի սղությունը կամ պակասությունը ներկայացնելու համար ասում են՝ «Սև աղվես դարձավ» (այստեղ հետաքրքիր է «սև»-ը. խթոնիկ աստվածությունների առանձնահատկություններից մեկն այն էր, որ

²⁷ Յայ դասական քնարերգություն, հ. 1, Երևան, 1986, էջ 130:

նրանց համար զոհաբերվում էին սկաթույր կենդանիներ):

Իսկ աղվեսի կերպարի ամենահետաքրքիր դրսևուրումը գտնում ենք հայկական հարսանիքում. նախքան հարսանքավորները կհասնեն հարսի տուն, մեկը, որ աղվեսի դերն է խաղում, ուղարկվում է՝ այդ մասին տեղեկացնելու: Այս կերպարում թերևս կարելի է գտնել լրաբեր-մունետիկ Հերմեսի հեռավոր արտացոլանքը: Մենք նույնպես, հավանաբար, այդպիսի մի աստվածություն ենք ունեցել: Հերմեսը, որ չարաձի գող էր և գողացել էր Ապոլլոնի հոտերը (նախիրը), մի տեսակ նմանվում է Բարշամի հարդը գողացած Վահագնին: Ընդ որում, Բարշամը ասորական մի աստվածություն է, որ ժամանակին Հայաստանում համադրվել է Միհրի հետ: Իսկ Միհրը մեծ ընդհանրություններ ունի հույն Ապոլլոնի հետ:

* * *

Դիցարաններում մանուկ աստվածները հաճախ հանդես են գալիս որպես հոր, երբեմն նաև մոր կողմից լրված մանուկներ (այս մասին արդեն ակնարկվել է): Այս արտասովոր հեքիաթում նույնպես հերոսը ասես բոլորովին որբ է, միայնակ:

Իսկ մենության զգացողությունը իշխում է հեքիաթի սկզբից մինչև վերջ: Հաճախ մենությանը հոմանիշ է դառնում միակը, շեշտվում է անհատականը, նման բազում անհատների մեջ եզակին: Իշխանը, բազավորը, առնետը, փառամոլը, լուրջ մարդը, հարբեցողը, լապտերավառը, աշխարհագրագետը, աղվեսը, օձը, անապատի եռաթերթ ծաղիկը, վարդը, գառնուկը, աստղը մենակ են: «Մենակ»-ը արձագանքվում է ամբողջ հեքիաթում: Այն արձագանքվում է ուղղակի իմաստով էլ, երբ իշխանը լեռան բարձունքից կանչում է. «Եկեք բարեկամանանք, ես բոլորովին մենակ եմ»՝

լսելով Երկարաձգվող արձագանքը՝ «մենակ... մենակ... մենակ...»:

Մենակ-միակ-մեկ-մեն-մի բառային շարքը, որի յուրաքանչյուր անդամ, նրբերանգներով տարբերվելով հանդերձ մյուսներից, այնուամենայնիվ սերում է միևնույն իմաստային դաշտից, արտացոլում է այն ամբողջության (կամ աստծո) նախնական պատկերացումը, որ այսօր ընդունված է որպես առաջին թիվ, այն ամենամեծ ամբողջության, որ իր մեջ է կրում ամեն բան և այն ամենափոքր



ամբողջության, առանց որի չկա ոչինչ: Նրան է Թումանյանը կոչում՝ «Ո՞վ անձառ Մին, որ ամենին միացնում ես մի կյանքում...»²⁸: Նրա մասին է Վեդաներում ասվում. «Մեծից մեծ և փոքրից փոքր Արմանը թաքնված է սրտի գաղտնարանում»²⁹, նաև

«Անհունորեն մեծը ներքևում է, վերևում, ետևում, առջևում, աջում, ձախում: Անհունորեն մեծը ամբողջ այս աշխարհն է: Այնուիեւս գալիս է անհունորեն մեծի մեկնությունը իբրև «Ես»: Ես ներքևում եմ, ես՝ վերևում, ես՝ ետևում, ես՝ առջևում, ես՝ աջում, ես՝ ձախում: Ես ամբողջ այս աշխարհն եմ»³⁰:

²⁸Հովհ. Թումանյան, Ընտիր Երկեր, հ. 1, Երևան, 1985, էջ 160:

²⁹Հին Արևելքի պոեզիա, Երևան, 1982, էջ 307:

³⁰Ն. տ. էջ 321:

Յունգը մանկան արքետիպի մասին խոսելիս նշում է, որ «միֆերում հրաշալի էակների որբությունը միայն սիմվոլ է, որ արտահայտում է նախնական միայնությունը, որ հատուկ է բացառապես հրաշալի էակներին»: «Միայնությունը բնորոշ է հավերժական տարերքին»³¹:



Ետրուսկների արևի աստվածը (մ.թ.ա. 5-րդ դար),
հանդիսավոր երթեղի մասնակցող երկանիվը զարդարելու
համար մետաղե թիթեղի վրա կատարված փորագրություն

Յունգը երկու հանգամանքէ կարևորում այն միֆերի համար, որոնց հիմքում ընկած է մանկան արքետիպը. մեկը աստվածամանուկի մենակությունն է, մյուսը՝ այն, որ նախաստեղծ աշխարհիում նա տանն է³²:

³¹ К, Г, Юнг, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004, стр.

44.

³² К, Г, Юнг, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004, стр. 35.

Կարող ենք առանց վարանելու ասել, որ այս հեքիաթը Յունգի տեսության ամենակառուցիկ մոդելն է:

Ինչո՞ւ էր իշխանն ամենից շատ սիրում վերջալույս դիտել, և որտեղ էլ լիներ, ուզում էր անպայման տեսնել, թե ինչպես է մայր մտնում արևը:

Գուցե պատասխանն անմիջականորեն կապվում է իր որբության ու մայրական գուրգուրանքի կարոտի հետ: Փոքրիկ իշխանն ասես տիեզերական հայելու մեջ իր կերպարանքն է տեսնում արևի տեսքով: Իսկ ժողովրդական իին պատկերացումներում, նույնիսկ լեզվամշակույթում մայրամուտը (ինչպես հայերեն մայրամուտ բառն է հուչում), արևի վերադարձն է մոր գիրկը, նրա ամենօրյա մահը: Օրվա այդ հրաշալի պահը խիստ շոշափելի երազի նման միսիթարում է նրան:

* * *

Փոքրիկ իշխանը նախ՝ վեցամյա Անտուանն է՝ մեծահասակների կողմից «լքված» ու «անպաշտպան», վտարված «Օլիմպոսից», որպես որբ մեկուսացած իր մոլորակում, մենակ իր մոլորակում՝ որպես աստված, ինչպես Ապոլլոնը Ղելոսում:

Ապա՝ Փոքրիկ իշխանը հենց Ապոլլոնն է՝ մուսաների առաջնորդը, արվեստների հովանավորը, նա է ստիպում նկարել՝ վերադարձնելով Երբեմնի կորսված պարզեցը:

Փոքրիկ իշխանը հոտերի հովանավոր աստված Ապոլլոնն է, որն իր տոտեմական ծագումն է հիշեցնում իր գառնուկն ուզելով:


Փոքրիկ իշխանը ճանապարհորդ Ապոլլոնն է՝ ճանապարհորդների հովանավորը, որ օգնության էր եկել վթարի Ենթարկված ինքնաթիռի օդաչուին:

Փոքրիկ իշխանը արևի աստված Ապոլլոնն է: Բացի նրանից, որ հեքիաթում հաճախ է հանդիպում Վերջալույս դիտելու պահը, կա նաև սիմվոլային արտահայտություն. ջրհորի չարխը հեքիաթի առասպելաբանական շերտում հանդես է գալիս որպես արեգակնային աստծո աստրիբուտը, ինչպիսին ուներ Ուրարտուի Շիվինին, ինչպիսին կար Ագռավաքարում՝ Միերի դռան հետևում, ինչպիսին էր Եգիպտական Ամոն-Ռայի՝ բազմաթիվ ձեռքերով պատկերվող արեգակնային սկավառակը:

* * *

Նա, ով առաջին անգամ է ընթերցում «Փոքրիկ իշխան» հեքիաթը, չի կարող պատկերացնել, թե ինչպիսի լուծում կստանա բժախնդիր պատվիրատուի՝ գառնուկ նկարելու պահանջը, և հեղինակի որոշումը նրա համար անակնկալ կլինի: Ասես Սենտ-Էքյուացերին պատահական ու շատ տեղին մի գյուտի հեղինակ է դառնում՝ պահանջված գառնուկն արկղով մատուցելով և զարմանալիորեն բավարարելով փոքրիկին (Հերմեսը ցանկացած հանգույց անտես բացելու կարողություն ուներ: Բոլոր պատահական գյուտերը վերագրվում էին Հերմեսին: Նա կարող էր տեսնել այն, ինչ չէր երևում ոչ ոքի): Փակ արկղը, որ մետաֆորային-սիմվոլիկ հարուստ պարունակություն ունի, կարող է միաժամանակ բնութագրվել Հերմեսի անունից առաջացած «հերմետիկ» բառով: Հենց այդ արկղում էր այն գառնուկը, որ կարող էր խորհրդանշել Ապոլլոնի՝ Հերմեսի կողմից գողացված և անգտնելիորեն թաքցված հոտը:

Արկղն իր մեջ բազմիցս, անվերջ կրկնվելու հնարավորությունն է պարունակում: Հեքիաթն ավարտվում է Փոքրիկ իշխանի անհետացումով, ինչը հեղինակին թույլ է տալիս ենթադրել, ավելի ճիշտ, համոզվել, որ նա վերադարձել է իր մոլորակ: Բայց հեքիաթում կա մի աննշան հուշում, աննշան՝ թե՛ իր փոքրությամբ, թե՛ հեքիաթի համար անէական թվալու պատճառով, ինչը կանխավ ապահովում է այդ վերադարձը և ապացուցում դրա հնարավոր լինելը:



«Այս մեկը ծլեց մի սերմից, որը չգիտես թե որտեղից էր ընկել նրա մոլորակի վրա» (25),-վարդի թիկի մասին ասվում է հեքիաթում:

Հողագործության սկզբնավորումից ի վեր մարդկության պատկերացումներում սերմը, կորիզը նույնացվում են կյանքի սկզբի հետ: Տիեզերքն էլ ունի իր կորիզը, և տիեզերածնական միֆերում, որոնք հնագույնն են բոլոր միֆերից, մանուկ աստվածը ծնվում է հենց այդ կորիզից՝ ներկայացնելով տիեզերքի ծնունդը (ի դեպ, հույների պտղաբերության և երկրագործության, հասկի հասունացման աստվածուիի Կորա-Դեմետրան երբեմն նույնացվել է իր դստեր՝ Պերսեփոնեի հետ, որ բնության մերնող ու հարություն առնող բոլոր աստվածների նման մերյալների բազավորությունից տարին մեկ անգամ վերադարձող բուսականության աստվածուիին էր: Ուստերենում **կօրա** բառը ծառի կեղև է նշանակում, **կօրենք** բառը նույն արմատից է առաջացել (հնմ. հայերեն՝ «կինարմատ»), ակնհայտ է նաև «Կորա» և «Կորիզ» բառերի նմանությունը): Արկղում (արկղի

կառուցվածքը վերատին հիշեցնում է 6 թիվը՝ իր վեց նիստերով) քնած աներևույթ գառնուկը (արևի աստվածների խորհրդանիշ կենդանին)` Փոքրիկ հշխանի վերամարմնավորումը, կյանքի շարունակության սիմվոլ է, սերմն է: Հիշենք նաև Նեղոսի ալիքներին տրված զամբյուղը (**կօրզինա**), որի մեջ էր հրեաների նոր կյանքի սերմը՝ Մովսեսը: Փայտե «տուփով» մարդու աջյունը հողում թաղելով՝ մարդիկ ամեն անգամ վերակենդանացնում են մեռնող-հարություն առնող աստվածության միֆը: Կորիզի կարծր պատյանն ապահովում է սաղմը վնասվելուց: Կորիզն է, որ տալիս է վերածննդի հույսը և կյանքի հարատևությունը:



Քրիստոսն ու Հովհաննես Մկրտիչը մանուկ հասակում
1665, Ազուն Կանո, Էրմիտաժ

Գառնուկն ինքը՝ Փոքրիկ հշխանն է, որ պիտի վերածվի սերմի՝ ամփոփվելով արկղում: Նա սերմն է, որից ծլում է բույսը, որից վերստին սերում է ինքը՝ նոր պարբերության մեջ, ժամանակի նոր հաշվարկման

սկզբում: Եվ պատահական չէ, որ հեքիաթում Փոքրիկ իշխանը հիշեցնում է. «Գիտե՞ս, վաղը մի տարին կլրանա, ինչ ես ընկել եմ ձեզ մոտ, երկրագնդի վրա...» (71): «...Ուրեմն մի շաբաթ առաջ՝ այն առավոտ, երբ մենք ծանոթացանք, պատահական չէ՞ր, որ դու մեն-մենակ թափառում էիր այս կողմերում: Դու ուզում էիր վերադառնալ այնտեղ, ուր ընկել էիր այն ժամանակ»

(72): Այս եզրահանգման համար կարծես հիմք չկա, թվում է՝ որևէ տրամաբանական կապ չունեն փոքրիկ հերոսի նշած ժամանակահատվածն ու միևնույն վայրում հայտնվելու անհրաժեշտությունը: Բայց պիտի որ կապ լինի, որովհետև մեկ անգամ ևս հիշեցվում է ժամանակը. «Գուցե այդ նրա համար, որ լրանում է տարի՞ն...» (72):

Պարբերականության առկայությունն, անկասկած, մատնանշում է բուսականությունն անձնավորող, մեռնող-հարություն առնող աստվածություն: Հունական առասպելները Ադոնիսին ներկայացնում են որպես որդին

Ադոնիսի մահը, 1709,
Զուգեպպե Մացուլա,
Երմիտաժ

գեղեցկուիի Մյուռայի (Սմյուռնա), որին աստվածները վերածեցին անուշաբույր խեժ արտադրող զմուռսի ծարի: Զնուռսի ծարից է ծնվում այդ հազվադեպ գեղեցկություն ունեցող մանուկը՝ Ադոնիսը: Ավրորիտեն, մանկանը հանձնեց ստորգետնյա թագավորության տիրուիի Պերսեփոնեին, որը չցանկացավ բաժանվել պատանուց: Դիցուիիների վեճը լուծեց Զևսը՝ թույլ տալով, որ նրանցից յուրաքանչյուրի հետ

Աղոնիսն անցկացներ տարվա երեք մասերից մեկը, իսկ երրորդ մասը տնօրիներ իր կամքով:

Բնության ժամացույցը բուսականության կենսառիթմերի բոլոր փուլերը չափում է մեկ տարվա պարբերությամբ:

Փոքրիկ իշխանը պիտի վերադառնար, բայց՝ «Իմ մարմինը շատ ծանր է, ես չեմ կարող նրան ինձ հետ տանել:... Բայց դա նույնն է, թե նետում ես քո իին պատյանը» (78): Վերադարձող ոգին պիտի լիներ, այն, ինչ անտեսանելի է, այն, ինչ իր ներսում էներգիայի տեսքով անփոփում է իր մասին անբողջ ինֆորմացիան, որ կարող է վերստեղծել իրեն առանց իր ինքնությունից նշույլ անզամ կորցնելու, պիտի վերածվեր սերմի: «Ես գիտեմ նա վերադարձավ իր մոլորակ, որովհետև երբ լույսը բացվեց, ես ավագի վրա չգտա նրա մարմինը» (80):

Մեկ ակնթարթ վերադառնանք հեքիաթի սկիզբը. «Այս մեկը ծլեց մի սերմից, որը չգիտես որտեղից էր ընկել նրա մոլորակի վրա» (25): Այսպես է ապահովում եքզուպերին իր փոքրիկ հերոսի վերադարձը, որ կարծես որպես ցորենի հատիկ ասում է. «Քեզ կթվա, թե ես մեռնում եմ, բայց դա ճիշտ չի...» (78):



Քաղաքակրթող հերոս

Քաղաքակրթող կամ մշակութային հերոսը միֆական մի կերպար է, ով ծեռք է բերում կամ առաջինն է ստեղծում մարդկանց համար մշակույթի տարբեր առարկաներ (կրակ, մշակովի բույսեր, աշխատանքային գործիքներ), սովորեցնում է որսորդություն, տարբեր արհեստներ, արվեստներ, մտցնում է որոշակի հասարակական կազմակերպվածություն, ծեսեր ու տոներ: Նրան վերագրվում է նաև մասնակցություն աշխարհաշինությանը՝ նախասկզբնական օվկիանոսից հողի դուրս բերում, երկնային լուսատուների տեղադրում, ցերեկվա ու գիշերվա հերթափոխի կարգավորում և այլն:




Քաքոս, 1853, Էնիլ Հոպֆգարդեն

գծեր կամ տարբեր աստվածների մեջ:

Հեքիաթում Փոքրիկ իշխան–Հերմես–աղվես նույնականությունը շուտով ենթարկվում է կերպարանափոխության. աղվեսն սկսում է խոսել ծիսակատարության մասին, հինգշաբթի օրվա մասին, երբ որսորդներն սկսում են պարել զյուղի արջիկների հետ, այդ օրերին իր գրոսանքի մասին, երբ հասնում է մինչև խաղողի այգիները. «Եթե որսորդները պարեին, երբ խելքներին փչեր, բոլոր օրերը միանման կլինեին, և ես երբեք չեի հանգստանա» (63):

A full-length marble statue of the Greek god Dionysus, also known as Bacco in Roman mythology. The figure is male and nude, with curly hair and a beard. He holds a bunch of grapes in his left hand and a small shallow vessel (kylix) in his right hand, which would have contained wine. The statue is set against a solid red background.



Դիմափոխը

Խաղողը, պարը, ծի-
սակատարությունը հի-
շեցնում են Բակխանալիան, որ Բաքոսի (Դիոնիսոս)
պատվին կատարվող տոնախմբություն էր: Դիոնիսոսի
երթերին մասնակցում էին կանայք՝ բաղեղից պսակներ
կապած, վայրի գագանների մորթիներ հազած: Նրա
պատվին հաստատված ծեսերն ուղեկցվում էին
հնագույն կախարդական վերազգեստավորման սովո-

³³ Константинов А. Рыцарь планеты Земля, "Альтернативы" № 2, 2008.

րույթներով, որտեղից սկզբնավորվել է հունական թատրոնը*: Դիոնիսոսն ամենուր նարդկանց գինեգործություն է սովորեցրել: Նրա կրոնը պարզունակ ու ժողովրդական բնույթ է կրել:



Մասնուկ Դիոնիսոսը
Հերմեսի գրկում (մ.թ.
ա. 340), Պրաքսիթելես

Եվ այսպես՝ աղվեսը հեքիաթի «ηγιαλικαհանդեսում» ծայտված Դիոնիսոս-Բաքոսն է, և մատնանշում է վերջինիս տոտեմական ծագումը: Դիօնիսոսին, սովորաբար, պատկերել են որպես գեղեցիկ, փափկասուն պատանի, երեմն նույնիսկ՝ որպես մանուկ՝ Հերմեսի ծեռքին:

Դիոնիսոսի պաշտամունքը ևս, ինչպես Հերմեսինը, միստերիաների բնույթ է ունեցել,

որին կարող էին մասնակցել հաղորդվածները միայն:

Աղվեսի «միստերիային» մասնակցելու համար Փոքրիկ իշխանը պիտի «հաղորդություն» ստանար. պիտի ընտելացներ նրան:

* Աթենքում Դիοնիսոսի տոնախմբությունների ժամանակ ելույթ էին ունենում այժեմի հազար երգիչների խմբերը, կատարում հատուկ հիմներ-դիվերամբուներ, որոնցից հետագայում առաջացավ տրագեդիան: «Տրագեդիա» բառը կարելի է բացատրել իրեն «այժերի երգ» («տրագոս»՝ այժ, «օդե»՝ երգ): Իսկ գյուղական տոնախմբություններում Դիոնիսոսի պատվին կատարում էին կատակի բնույթ կրող երգեր, որոնցից առաջ է եկել կոմեդիան, որ բառացի նշանակում է «գյուղական երգ» («կոմոն»՝ գյուղ, «օդե»՝ երգ): Հիշենք հայկական բանահյուտության կատակերգերը, որոնց հիմնական կերպարը աղվեսն է՝ գյուղական կողորիտում, և որոնք երգվում էին չարաձմի ու խորամանկ այդ գագանիկի հանդեպ ներողամտությամբ ու սիրով:

Դիոնիսոսի պաշտամունքը դաշնում է պետական կրոն՝ խաղողագործության զարգացմանը զուգընթաց: Դիոնիսոսն ընդունվում է նաև որպես բուսականության աստվածություն՝ մեռնող և հարություն առնող բնության աստված:

Հետաքրքիր կերպով ժողովուրդը, առաջին հայցքից՝ անհամատեղելի, աղվեսի ու խաղողի կապն է ստեղծել հետևյալ առածում. «Աղվեսի դունչը չհասավ խաղողին, ասաց՝ խակ է» (ժողովրդական):

Հյուսիսարևելյան Ասիայում գոյություն ունեն աղվեսին ագռավի, մշակ հերոսի, աշխարհն ստեղծողի, արևը, լուսինը, աստղերն ու երկիրը արարողի հետ կապող այումներ:

Հեքիաթում աղվեսի կերպարն ունի քաղաքակրթող հերոսի ստվերագծեր: Նա է սովորեցնում, որ պետք է ընտելացնել, նա է բացատրում, թե ինչ է ծիսակատարությունը:

Ֆրանսիացի ստրուկտուրալիստ Լիի-Սթրոսը միֆը համարում է նախաստեղծ տրամաբանության գործիքը, որը հակադրություններից ելք էր կմտրում՝ մուտքագրելով «միջնորդի» ընթացիկ ֆիգուրը: Ըստ նրա՝ այդպիսի մի ընթացիկ ֆիգուր է մշակ հերոսը: Նրա կարծիքով՝ ագռավն ու կոյոտը ընտրված են որպես քաղաքակրթող հերոսներ, որովհետև նրանք սնվում են մնացորդներով (իրենք չեն որսում) և այդպիսով հաղթահարում են հակադրությունը բուսակերության ու մսակերության, որսորդության ու երկրագործության, վերջապես՝ կյանքի ու մահվան միջև:

Լիի-Սթրոսի տեսական մտքի հիմնավորումն էլ գտնում ենք հեքիաթում: Աղվեսը պատմում է, որ իր կյանքը ծանձրալի է. ինքը հավ է որսում, մարդիկ՝ իրեն: Բայց եթե Իշխանն իրեն ընտելացնի, իր կյանքը կլուսավորվի: «Նայի՛ր... Տեսնո՞ւ ես այնտեղ՝ արտերի մեջ

հասնում է ցորենը: Ես հաց չեմ ուտում: Հասկերն ինձ պետք չեն: Ցորենի արտերն ինձ ոչինչ չեն հիշեցնում: Եվ դա շատ տիխուր բան է: Բայց դու ոսկե մազեր ունես: Եվ ինչքան լավ կլինի, որ դու ինձ ընտելացնես: Ոսկե ցորենը կիհշեցնի ինձ քո մասին: Եվ ես կսկսեմ սիրել բանուց օրորվող հասկերի շրջունը...»(60):



Աղվեսի խոսքում պարզ մի համեմատություն կա, որի ակունքներն իրականում պետք է փնտրել դարձալ միֆական խորքերում: Պատահական չէ Փոքրիկ իշխանի ոսկե մազերի համեմատությունը քամուց օրորվող հասկերի հետ: Մի շարք ավանդություններում տարածված է այն պատկերացունը, որ խոտը (հասկը՝ որպես խոտի մասնավոր դեպք) մազերն են ինչ-որ նախաստեղծ մարդու, որի մարմնի տարբեր մասերից է գոյացել երկիրը կամ Տիեզերքը:

Մետաղի դարաշրջանի արշալույսին մշակութային հերոսը հանդես է գալիս հրաշալի դարբնի կերպարանքով, ինչպես հունական դիցարանի Հեփեստոսը (նախորդ գլխում արդեն խոսվել է դարբնության աստծոն հետ Փոքրիկ իշխանի կերպարի կապի մասին, ինչի

անմիջական հուշումը տալիս են իշխանի հրաբուխները):

Հատ քաղաքակրթող հերոսների կենդանակերպությունը, կենդանական անունները կամ կենդանական ատրիբուտները բացատրվում են նրանց տոտեմական ծագմանք, տոտեմական նախնու հետ ունեցած նրանց կապով:



Մշակ հերոսը երբեմն հանդես է գալիս որպես բնության տարերային, քառսային ուժերի դեմ մարտնչող կերպար, որոնք, մարմնավորված որպես հրեշներ կամ խթոնիկ դևեր, փորձում են խախտել ընդունված կարգը: «Փոքրիկ իշխանը» հեքիաթում որպես բնության քառսային, տարերային ուժ է ներկայանում բառբաբը: Փոքրիկ հերոսին անհանգստացնող հարցերից մեկն այն էր, թե զարնուկները թվեր ուտում են, և եթե՝ այդ, ուրեմն՝ բառբաբներ էլ կուտեն:

Հետաքրքիր կերպով բառբաբները զուգադրվում են միևնույն տարերքը խորհրդանշող հողածին հրեշների՝ օձի, վիշապի, ցուլ հետ և դաշնում նրանց հեքիաթային վերամարմնավորումը: Իսկ վիշապաքաղ Վահագնի ու Միհրի առասպելական ակունքներից ծնված զարնուկ (խոյ)՝Փոքրիկ իշխանը ներկայանում է որպես այդ «վիշապների» դեմ պայքարող փրկարար ուժ: Ի դեպ, օձի խթոնիկ բնույթը արտացոլված է շատ

ազգերի լեզվամտածողության մեջ և պարզության ներկայանում է նրանց լեզուներում «հող» բառից «օձ» բառի ծագման փաստով, ինչպես, օրինակ, ռուսերենում «земля»—«змея»*:




Բարբարի սերմերով վարակված է ամբողջ մոլորակը, և եթե ժամանակին չձանաչես նրա ծիլը,

* Աշխարհայացքների, կրոնների ու գաղափարախոսությունների տարբերությունները երևում են համապարփակ սիմվոլներում. դրանք ամփոփում են ազգի ամենահատկանիշական գծերը: Հայկական առասպեկները, Վիպասանքը, Էպոսը ի հայտ են բերում դյուցազուններ, կիսաստվածներ ու հերոսներ, որոնք միշտ պատերազմում են օձի կերպարանքով մարմնավորված թշնամիների դեմ: Մասիսից դեպի արևելք բնակվող մարական ծագում ունեցող ցեղի տոտեմը՝ նրանց պաշտած կենդանին, Դահակն էր, որի անունով ցեղն իրեն կոչել էր Աժդահակի զարմ («աժ» նշանակում է օձ): Վիպասանքում Տիգրանը կովում է Աժդահակի դեմ այնպես, ինչպես Վահագնը՝ Վիշապների: Արաբերեն «օսման» բառը, որ օսմանյան ցեղի նախահոր անունն է, նշանակում է «օձի ծագ» (օձմանուկ):

հետո նրանից չես ազատվի: Պարզ երևում է ոչ միայն վիշապամարտիկ ամպրոպածին հերոսը, այլև մարդկանց երկրագործության գաղտնիքները բացող նշակ նախնին: «Այստեղ մի հաստատուն կարգ կա: Առավոտյան հենց որ արթնանաս, լվացվես ու քեզ կարգի բերես, պետք է տեղն ու տեղը կարգի բերես նաև քո մոլորակը: Հենց որ կարողացար բարբարի ծիլերը տարբերել վարդի թփերից, պետք է անմիջապես դրանք արմատախիլ անես: Վարդի ու բարբարի մատղաշ ծիլերը շատ են իրար նմանվում: Դա շատ ձանձրալի աշխատանք է, բայց բոլորովին դժվար չէ»:

«Մի անգամ նա ինձ խորհուրդ տվեց, որ ես աշխատեմ մի այնպիսի նկար նկարել, որ մեզ մոտ էլ երեխաներն այդ բանը լավ հասկանան» (18):



Դժվար չէ նկատել, որ տեքստն ինքը մաքուր միֆ է, եթե անգամ, ինչպես երևում է, ենթատեքստը պլաքն ուղղում է դեպի ներաշխարհ՝ չարի ու բարու հնագույն կրիվը տեղափոխելով այնտեղ և վերածվելով մի տեսակ բարոյագիտական խրատի:

Դժվար չէ նաև տարորոշել Հիսուսի վարդապետության առանցքային գաղափարները, որ այնքան բյուրեղացած են նրա պատմած առակներում (այգու

մշակների, մոլախոտի, տաղանդների, թզենու, ցորենի սերմի, մանանեխի հատիկի և այլ առակներ), որոնք ամենից հաճախ կապվում են հողագործության հետ:



Առակը, որ կարևոր դեր էր կատարում Հիսուսի քարոզչության մեջ, գործածվում է նաև այս հեքիաթում, Փոքրիկ իշխանը խոսում է Հիսուսի ոճով: Նա մեկ պատմում է ծովյլ մարդու առակը. «Ես մի մոլորակ գիտեի, որի վրա մի ծովյլ մարդ էր ապրում: Նա բարեաբի 3 թուփ ժամանակին չքաղիանեց, և...» (19), մեկ՝ լուրջ մարդու առակը. «Ես մի մոլորակ գիտեմ, որի վրա մի կարմրադեմ պարոն է ապրում: Նա իր ամբողջ կյանքում ծաղկից հոտ չի քաշել: Ոչ մի անգամ աստղերին չի նայել: Նա երբեք և ոչ ոքի չի սիրել: Եվ երբեք նա ոչինչ չի արել: Նա միայն մի գործով է զբաղված՝ թվեր է գումարում: Եվ առավոտից մինչև գիշեր մի բան է կրկնում. «Ես լուրջ մարդ եմ, ես լուրջ

մարդ եմ»...» (23): Փոքրիկ իշխանը այս եղանակով դանդաղ կռվում է հեղինակի ներսի վիշապօձի դեմ, բարբարի դեմ, որ սպառնում է աշխարհը կործանել, և տապալում է այն: Քայլ առ քայլ Սենտ-Էքայուաբերիի լուրջ գործը կորցնում է իր կարևորությունը, հետզհետեւ մեքենայի խափանված շարժիչի և զարմանալի փոքրիկի անհանգստացնող ներկայության ստեղծած երկնժար իրավիճակ-հոգեվիճակի ծանրության կենտրոնը տեղափոխվում է աստվածամանուկի՝ այլընտրանք չընդունող իրականություն, որի մեջ հեղինակը գտնում է իր կորցրած ներդաշնակությունը: Փոքրիկ իշխանի կրիվը ինքնատիպ է: Նրա արցունքներն անգամ, որոնք հաճախ են ընկալվում որպես թուլության նշան, պայքարի մի միջոց են, որոնց առջև իմաստագրկվում ու չքանում են առօրյայի բոլոր կարևոր թվացող դեպքերը:

Մարդկային աշխարհի պաշտպանությունը դևերից ու հրեշներից քաղաքակրթող հերոսի կարևորագույն հիգան է: Այդպես է ներկայանում նաև բարբարների դեմ հավերժորեն պայքարող իշխանը: Նրանք այնքան են վտանգավոր, որ եթե մոլորակը փոքրիկ է, իսկ բարբարները՝ շատ, նրանք մոլորակը կտոր-կտոր կանեն: Սա ամենօրյա աշխատանք է պահանջում և ոգու ուժ:

Ֆիննական էպոսում շամանների նախահայրը՝ Վյայնյամեյնեն, աշխարհագոյացման ժամանակ ելնում է օվկիանոսից և հանդիպում մի հրաշամանուկի՝ Սամփսին (որ էտրուսկյան Տագեսի^{*} անալոգն է): Սա մի փոքրիկ տղա է, որ հերկում է հողն ու սերմեր շաղում: Այս հրաշամանուկի կողմից հողում տնկված ծառերի

* Տագեսը (Տագետ) էտրուսկյան աստվածություն է, մի իմաստուն հրաշամանուկ, որին հանկարծ տեսել է հողագործը, եթե նա դուրս է ցատկել հողի ակոսից: Տագեսը մարդկանց սովորեցրել է գուշակության արվեստն ու անհետացել:

մեջ կա մի կաղնի, որ պիտի բարձրանա դեպի երկինք և
իր ճյուղերով ծածկի արևը: Որպեսզի այդ բանը թույլ
չտա, Վյայնյամեյնեն դիմում է ջրերի գորությանը:



Եվ ջրերից բարձրանում է հսկայի կառուցվածքով,
բայց շատ փոքր մարդուկը, որի ուժերին չի հավատում
Վյայնյամեյնեն՝ ասելով, թե նա ստեղծված չէ չար ծառն
արմատախիլ անելու համար: Այդ լսելով՝ ծովային
մանկիկը վերածվում է հսկայի, մոտենում է կաղնուն և
երեք հզոր հարվածով գետնին տապալում այն՝ բացե-
լով երկինքը, ազատելով արևն ու լուսինը:

Նման մի կերպար է հնդկական դիցարանի
Նարայանան, որ աշխարհին ազատելու համար, կացինն

առած, գնում է տապալելու արևի ճամփան փակող և աշխարհը կործանել սպառնացող հսկա ծառը:

Անկասկած, Փոքրիկ իշխանի ազգակցական կապը բոլոր նշված միֆական կերպարների հետ հաստատվում է հեքիաթում, որը կարելի է կարդալ որպես իին առասպեկտախառն վեպի գեղարվեստական մի պատում: Հավաստի է հնչում այն, ինչ պատմվում է անտեղ, գեղեցիկ են հնչում բոլոր Ճշմարտությունները, որ ասվում են հերոսների շուրջերով, ականա տրվում ես այլաբանությունների հմայքին ու հանկարծ սարսուռով հայտնաբերում, որ ամենամեծ Ճշմարտությունները այլաբանություն են թվում:



Միկենը ճանուկ
Շիռնիսոսի հետ

Մ.թ. թ. 3-րդ դարի արձանի կրկնօրինակ

«Ես նրան այնպես էի գրկել, կարծես նա փոքր երեխա էր, սակայն ինձ այնպես էր թվում, թե նա սահում է իմ գրկից, ընկնում է անդունդը և ես, միևնույն է, ուժ չունեմ նրան պահելու» (74):

Հեքիաթն իր ներքին կառուց-
վածքով նման է

Ավետարանին: Երկու գործերում խորհրդավոր մի պահ կա. ուրիշ աշխարհից եկած երկու կերպարներն էլ՝ և Քրիստոսը, և Իշխանը, խոսում են հանգուցալուժնան համար նախատեսված կերպարների հետ՝ Հուդայի և օծի: Քրիստոսն զգուշացնում է, որ Հուդան շտապի անել այն, ինչ պիտի աներ: Նույն պայմանավորվածությունը կա հեքիաթում. «Դե, իհարկե, դու իմ

հետքերը ավագի վրա կգտնես ու ինձ կսպասես: Այս գիշեր ես այնտեղ կգամ, իսկ իհմա գնա» (73):

Անգամ Քրիստոսի կասկածի ու վարանումի ամենամարդկային ակնթարթը կա հեքիաթում արտացոլված. «Դու ինձ ի՞ն չես ստիպի, որ երկար տանջվեն» («Հայր, եթե կարելի է, հեռու վանիր այս գավաթն ինձանից»):

Հեքիաթի վերջում՝ նախքան վերջին քայլը կատարելը, Փոքրիկ իշխանը խոսում է այնպես, ինչպես Քրիստոսը, որ աշակերտներին ասում էր, թե խնդրելու է Հորը, որ ուրիշ միսիթարիչ տա նրանց, որպեսզի հավիտյան բնակվի նրանց հետ ու նրանց մեջ: Ճշմարտության հոգին, որ այս աշխարհը չի կարող ընդունել, որովհետև չի տեսնում այն ու չի կարող ճանաչել:

Իր փոքրիկ «ավետարանն» այսպես է ավարտում Փոքրիկ իշխանը. «Եվ երբ դու միսիթարվես (վերջիվերջո, բոլորն էլ միսիթարվում են), ուրախ կլինես, որ ինձ ճանաչել ես երբեք: Դու միշտ իմ բարեկամը կլինես: Դու կուգենաս ինձ հետ ծիծաղել: Երբեմն, այ այսպես, պատուհանդ կրացես, ու քեզ համար հաճելի կլինի... Եվ քո բարեկամները կզարմանան, երբ տեսնեն, որ նայում ես երկնքին ու ծիծաղում... Կարծես աստղերի փոխարեն ես քեզ բազմաթիվ ծիծաղող զանգակներ եմ նվիրել...»(76):



Փոքրիկ իշխանի թանգարանը Կանագավայում (Ճապոնիա)



Թանգարանի մուտքը



Թանգարանի քարտեզը



Փոքրիկ իշխանի այգին



Թիվ 612 աստղակերպը



Լապտերավառի հրապարակը



ճանապարհ դեպի
աշխարհագրագետը



Օգտագործված գրականության ցանկ

1. Անտուան դը Սենտ-Էքզյուպերի, «Փոքրիկ իշխանը», Երևան, 1985:
2. Անտուան դը Սենտ-Էքզյուպերի, «Մարդկանց երկիրը», Երևան, 1961:
3. Ֆրանսիական նովել-XX, Երևան, 1990:
4. Վակոնմախեր Մ., Առաջարկան, Անտուան դը Սենտ-Էքզյուպերի, Մարդկանց երկիրը, Երևան, 1961:
5. Միֆы народов мира, т.1-2.
6. Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ, Երևան, 1979, էջ 76:
7. Կ. Г. Юнг, «Душа и миф. Шесть архетипов», Минск, 2004.
8. Կ. Г. Юнг, «Дух в человеке, искусстве и литературе», Минск, 2003.
9. Хрестоматия по философии, М. 2001.
10. Հայ դասական քնարերգություն, հ. 1, Երևան, 1986:
11. Հայ դասական քնարերգություն, հ. 2, Երևան 1986:
12. Ն. Ա. Կուն, Հին Հունատանի լեգենդներն ու առասպելները, Երևան, 1956:
13. Հին Արևելքի պոեզիա, Երևան, 1982:
14. Константинов А. Рыцарь планеты Земля, журнал «Альтернативы» № 2, 2008.
15. Мико М. Сент-Экзюпери. - Пер. с фр. - М.: Молодая гвардия, 1963. - 463 с.- (Жизнь замечательных людей).

Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի գրական ժառանգությունը

- «Օդաչուն», առաջին պատմվածքը՝ տպագրված 1926 թվականի ապրիլի 1-ին:
- «Հարավային փոստատարը» (վեպ), 1929:
- «Գիշերային թռիչք» (վեպ), 1931:
- «Մարդկանց երկիրը» («Քամի, ավագ և աստղեր») (վեպ), 1939:
- «Ռազմական օդաչուն», 1942:
- «Նամակ պատանդին» (էսսե), 1943:
- «Փոքրիկ իշխանը», 1943:
- «Միջնաբերդ» («Ավագի իմաստնությունը», «Citadel»), 1948:

Ծուրջ երկու տասնյակ ոչ մեծ գործեր՝ հոդվածներ, գրախոսականներ, գրքերի առաջաբաններ և նամականին:

Շնորհված գրական մրցանակները

1930–Ֆեմինի գրական մրցանակ՝ «Գիշերային թռիչք» վեպի համար:

1939–Ֆրանսիական ակադեմիայի մեծ մրցանակ (Grand-Pri)՝ «Մարդկանց երկիրը» («Քամի, ավագ և աստղեր») վեպի համար:

1940–ԱՄՆ-ի «Ազգային գիրք» մրցանակ՝ «Մարդկանց երկիրը» վեպի համար:

Ռազմական պարզևատրում

1939 թվականին պարզևատրվել է ֆրանսիայի Հանրապետության «Ռազմական խաչ» շքանշանով:

Ի պատիվ նրա անվանակոչվել են

- «Սենտ-Էքսյուպերի» ինտերնացիոնալ օդանավակայանը Լիոնում (Ֆրանսիա),
- 1975-ի նոյեմբերի 2-ին Տատյանա Սմիրնովայի հայտնաբերած աստղակերպ 2578-ը՝ «B 612» անվանումով,
- Մի շարք դպրոցներ Ֆրանսիայի տարբեր քաղաքներում,
- Նիցցա քաղաքի երիտասարդական հյուրանոցն ու ուսանողական հանրակացարանը (Ֆրանսիա),
- Սանտյագոյի ֆրանսիական մի դպրոց (Չիլի),
- Ֆրանսիական դպրոցներից մեկը Մադրիդում (Իսպանիա),
- դպրոցներից մեկն Օուագադուգույում (Բուրկինա Ֆասո),
- Սան Սալվադորի մի դպրոց (Էլ Սալվադոր),
- Ֆրանսիական դպրոցներից մեկը Ռաբաթում (Մարոկկո),
- Սպորտի բարձրագույն ուսումնական հաստատությունը Մոնրեալում (Կանադա),
- Վարչակայի ֆրանսիական ավագ դպրոցը (Լիսաստան),
- Պատագոնիայի լեռներից մեկը (Արգենտինա),
- Ավիացիոն մոտիվներով ձևավորված «Cafe Saint-Ex» կոչվող ռեստորանը Վաշինգտոնում (ԱՄՆ),
- Օդաչուների համար նախատեսված ձեռքի ժամացույցներ արտադրող «Ժամացույցների միջազգային ընկերությունը» (IWC Schaffhausen):
- Մինչև 2002 թվական Սենտ-Էքսյուպերիի և նրա Փոքրիկ իշխանի նկարները գետեղված էին հիսունֆրանկանոց թղթադրամի վրա:

Կինոֆիլմեր

1. «Խիզախության թևեր» (1995, ԱՄՆ): Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի արձակի մոտիվներով: Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝ Ժան-Ժակ Աննո:
2. «Սենտ-Էքզյուպերի» (1995, Մեծ Բրիտանիա): Մի քանի նովելներից (մանկություն, պատանեկություն, երիտասարդություն) բաղկացած դրամա: Ռեժիսոր՝ Անանդա Թաքեր:
3. «Ինքնաթիռը» (1994, Ուուսաստան): Հեռուստաֆիլմ Սենտ-Էքզյուպերիի «Հարավային փոստատարը» վեպի մոտիվներով: Բեմադրող Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝ Ալեքսանդր Սվեշնիկով:
4. «Փօքրիկ իշխանը» (1993, Ուուսաստան): Հեքիաթի մոտիվներով: Բեմադրող Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝ Անդրեյ Ուսս:
5. «Փօքրիկ իշխանը» (1966, ԽՍՀՄ, Լիտվայի կինոստուդիա): Հեքիաթի մոտիվներով: Բեմադրող Ռեժիսոր և սցենարի հեղինակ՝ Արունաս Ժերյունաս:

Օպերա

«Գիշերային թռիչք» (1940): Կոմպոզիտոր՝ Լուիջի Դալ-լապիկոլա (1904-1975):

Գրականություն

Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի կյանքի և ստեղծագործության մասին

1. Հարությունյան Ս., Իմ մանկությունից Եկած մարդ, Անտուան դը Սենտ-Էքզյուպերի, Փոքրիկ իշխանը, Երևան, 1985:
2. Վականական Ս., Առաջարան, Անտուան դը Սենտ-Էքզյուպերի, Մարդկանց երկիրը, Երևան, 1961:
3. Անдреев Լ. Գ. Ուважение к человеку!.. Вот пробный камень. Предисловие к кни.: Сент-Экзюпери А. де. Военные записки. - М.: Прогресс, 1986.
4. Буковская А. Сент-Экзюпери, или Парадоксы гуманизма (1977). Пер. с польск (1983).
5. Балашова Т.В. "Держитесь мы идем..." Предисловие к книге: Анна Буковская. Сент-Экзюпери, или Парадоксы гуманизма. Пер. с польского А.Н. Ермонского - М.: Радуга, 1983.
6. Бунтман С., Александров Н., Варгафтик А., Журавлева О. 29 июня 1900-го года родился Сент-Экзюпери. Gazeta.RU, выпуск № 081, 05.11.1999 http://gazeta.msk.ru/echo.msk.ru/29-06-1999_denek.htm
7. Григорьев В. П., Антуан де Сент-Экзюпери (Биография писателя), Л., 1973.
8. Малюгин Л.А. Жизнь Сент-Экзюпери (пьеса).
9. Мишо М. Сент-Экзюпери. - Пер. с фр. "Жизнь замечательных людей". М., "Молодая гвардия", 1963.
10. Моруа А. Антуан де Сент-Экзюпери. От Монтеня до Арагона. - Пер. с фр. - М.: Радуга, 1983. с. 502-522.
11. Браслет Экзюпери. Сенсация. Автор не указан. <http://ftp.nns.ru/vyborka/culture/archiv/161198/sensaci.html>.

12. Нора Галь. Под звездой Сент-Экса. Нора Галь. Воспоминания. Статьи. Стихи. Письма. Библиография. - М.: АРГО-РИСК, 1997.
13. Грачев Р. Антуан де Сент-Экзюпери. - В кн.: Писатели Франции. Под ред. Е. Г. Эткинда. - М., Просвещение, 1964. - с. 661-667.
14. Грачев Р. О первой книге писателя-летчика.-“Нева”, 1963, № 9.
15. Губман Б. Маленький принц над цитаделью духа. - В кн.: Сент-Экзюпери А. де. Сочинения: В 2 т. - Пер. с фр. - М.: "Согласие", 1994. - Т.2, стр. 542.
16. Иванова Н. Прерванный полет.
17. Исбах А. Что надо сказать людям (Антуан де Сент-Экзюпери). - В кн.: Исбах А. Во главе колонны. Очерки о французской литературе. М., 1970.
18. Константинов А. Рыцарь планеты Земля, "Альтернативы" № 2, 2008.
19. Котляров В.Н. Звездный путь Экзюпери: [Эссе]. - Нальчик: Изд. центр "Эль-Фа", 1995.
20. Малюгин Л.А. Человек с планеты Земля. "Комсомольская правда", 18.05.1965.
21. Мехонцев В. Неужели мы найдем Маленького принца? "Новая газета"(novgaz@relline.ru), № 44(516) от 10 ноября 1998 года. Рубрика "Тайны века".
22. Петрова Н. Компьютерная графика и анимация по Сент-Экзюпери.
<http://www.virtual.ru/vculture/exupery/Exupery.html>
23. Самолет Сент-Экзюпери восстановлен энтузиастами. - Lenta.ru, 02.06.2000, пятница. (<http://lenta.ru/world/2000/04/22/plane/>)
24. Макс Фрай. Антуан де Сент-Экзюпери - Тот Который Всех Приручил. http://vesti.ru/frei/03-06-1999_antuan.htm

25. Человек с планеты Земля, (К 90-летию со дня рождения А. Де Сент-Экзюпери), М., 1990.
26. Яценко Н. И. Мой Сент-Экзюпери: Записки библиофила. - Ульяновск: Симб. кн., 1995. - 184 с.: ил.
27. Alberes R.-M. Saint-Exupery. - La Nouvelle Edition.
28. Anet D. Antoine de Saint-Exupery, Poete, Romancier, Moraliste. - Correa.
29. Bell M. Gabrielle Roy and Antoine De Saint-Exupery: Terre Des Hommes - Self and Non-Self.
30. Capestan E.J. The Dialectic of the Little Prince.
31. Cate C. Antoine de Saint-Exupery: His Life and Times. - G. P. Putnam's Sons, New York, 1970.
32. Chevrier P. Antoine de Saint-Exupery. - Paris: Gallimard, 1958.
33. Crisnoy M. de. Antoine de Saint-Exupery, poete et aviateur. - Spes.
34. Delange R., Werth L. La vie de Saint-Exupery, suivi de Tel que je l'ai connu. - Le Seuil.
35. Deramus B. From Juby to Arras: Engagement in Saint-Exupery.
36. Desfrem M. Saint Ex.- Paris: Paris-Match, 1974.
37. Estang L. Saint-Exupery par lui-même. - Le Seuil. (Эстан Л. Сент-Экзюпери о самом себе.)
38. Hommage collectif. Saint-Exupery. Textes de L.-P. Fargue, Simone de Saint-Exupery, B. Cendrars, L. Werth, L.-M. Chassin, A.-R. Metral, P. de Lanux, J. Roy, L. Dumont, P. Dalloz, J. Leleu, H. Aldington, F. Giner, De Los Rios, L. Barjon, R. Stephane, R. Caillois, G. Mounin, A. Angles, H. Froment. (Confluences VII-e annee № 12-14.)
39. Higgins J.E. The Little Prince : A Reverie of Substance.
40. Huguet J. Saint-Exupery ou l'enseignement du desert. - La Colombe.
41. Les critiques de notre temps et Sain-Exupery. Paris, 1971.

42. Nguyen-Van-Huy P. Le Compagnon Du Petit Prince:
Cahier D'Exercises Sur Le Texte De Saint-Exupery.
43. Nguyen-Van-Huy P. Le Devenir et la Conscience
Cosmique Chez Saint-Exupery.
44. Notice genealogique sur la famille de Saint-Exupery.
“A Paris, chez Jouaust, 338, rue Saint-Honore. Edition
de 1878, tiree a 150 exemplaire”.
45. Pelissier G. Les Cinq Visages de Saint-Exupery. -
Flammarion.
46. Phillips J. Poet and Pilot Antoine De Saint-Exupery.
47. Pratt H. Saint-Exupery. Le dernier vol.
48. Roy J. Passion et mort de Saint-Exupery. - Gallimard.
(Ры Ж. Любовь и смерть Сент-Экзюпери.)
49. Van Den Berghe C.L. La Pensee De Saint-Exupery.
50. Schiff S. Saint-Exupery: A Biography. - Alfred A.
Knopf, New York, 1995.
51. Zeller R. La vie secrete d'Antoine de Saint-Exupery. -
Alsatia.

Բովանդակություն

Մուտք	3	
Սենտ-Էքզյուպերի-Փոքրիկ իշխան:		
Կյանքի շրջափուլերը հեքիաթի հայելում.....	5	
Թիվը որպես երևակայության ֆիգուր.....	14	
Մանկան արքետիպը և Փոքրիկ իշխանը.....	33	
Փոքրիկ իշխանի դիցաբանական գծերը.....	49	
Քաղաքակրթող հերոս.....	74	
Փոքրիկ իշխանի թանգարանը Կանագավայում (Ճապոնիա)	87	
Օգտագործված գրականության ցանկ	89	
Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի գրական ժառանգությունը.....		90
Շնորհված գրական մրցանակները.....	90	
Ուզմական պարգևատրում.....	90	
Ի պատիվ նրա անվանակոչվել են.....	91	
Կինոֆիլմեր.....	92	
Օպերա.....	92	
Գրականություն		
Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի կյանքի և ստեղծագործության մասին.....	93	

Լուսինե Ավետիսյան
Հավերժանանուկը

Лусине Аветисян
Вечны́ младенец

Lusine Avetisyan
The Eternal Baby

Լրասինե Արարատի Ավետիսյանը ծնվել է 1975 թվականի նայիսի 16-ին ԵՂԻՄ-ում: Նախնական կրթությունն ստացել է Արմավիր քաղաքի թիվ 7 միջնակարգ դպրոցի հայագիտական թեքունով՝ դասարանը, ընդունվել Երևանի պատաւական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, որն ավարտելով՝ 1996-ին ընդունվել է ՀՀ ԳԱԱ

Մանուկ Արենյանի անվան գրականության ինստիտուտի ասախրանտուրա: 2003-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1996-ից աշխատում է նույն ինստիտուտում: Դասավանդել է Արմավիր քաղաքի «Արարատ» համալսարանում, այժմ՝ Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանում:

Այս աշխատությունը և Ավետիսյանի երրորդ գիրքն է: 2000-ին լույս է ընծայվել նրա բահաստեղծությունների ժողովածուն՝ 2005-ին՝ «Տիրան Չրաբյանի» (Ինտրա) պոետիկան»:

«Շավերժանանուկը» գրքի հեղինակն ունի հետաքրքրությունների լայն շրջանակ, որ ներառում է ոչ միայն հասարակական, այլև մաթեմատիկական ու բնական գիտությունները:

Իսկ արվեստի բնագավառում դրսերվում են նրա բանաստեղծական, երաժշտական, նկարչական և ինքնատիպ քանդակներ կերտելու շնորհները: Ամսնակցել է նիշարք անհատական և կոլեկտիվ ցուցահանդեսների:



- Մարդիկ մի պարտեզում 5000 վարդ են աճեցնում և չեն գտնում այն, ինչ փնտրում են... Մինչդեռ այն, ինչ նրանք փնտրում են, կարելի է գտնել ամեն մի վարդի մեջ, մի կուն ջրում...
- Հեռավորությունը տարածությամբ չէ, որ չափվում է: Մի պարտեզի ցանկապատ իր եւտևում ավելի շատ գաղտնիքներ կարող է թաքցնել, քան Չինական պարիսպը, և փոքրիկ աղջկա սիրտը ավելի լավ է պաշտպանված լոռությամբ, քան Սահարայի օազիսները՝ պազի հսկա տարածությամբ:

 - Յուրաքանչյուր արհեստի մեծությունը, թերևս, մարդկանց միավորելն է... Աշխատելով ստեղծել միայն նյութական բարիքներ, մենք մեր ձեռքով կառուցում ենք մեր քանությունը...
 - Տան ամենահիանալի հատկանիշն այն չէ, որ քեզ ապաստանուն է, տաքացնում, և ոչ էլ այն, որ դու նրա պատերի տերն ես: Այլ այն, որ նա դանդաղորեն քո էությունը լցնում է մեղմության պաշարներով, որոնք հոգուդ խորքում կազմում են մի մութ զանգված, որից աղբյուրի ջրերի նման սկիզբ են առնում անուրջները...
 - Ինձ տանջողը թշվառվայունը չէ երեք, որի հետ պերջիվերջ համակերպվում եմ, իմշալս ծովության հետ... Այս, ինձ ինձ տանջում է, չի կարող բուժվել աղքատների համար տրվող ծոյի ճաշերով... Ինձ տանջողը յուրաքանչյուր մարդու մեջ սպանված Մոցարտն է:

 - Մարդ լինել նշանակում է պատասխանատվություն զգալ: Նշանակում է ամաչել թշվառվայան արջեն, որը, թվում է, թե իրենից կախված չէ: Նշանակում է հպարտ զգալ ընկերների տարած հաղթանակի համար: Նշանակում է, որ տեղադրելով իր քարը, նա զգում է իր մասնակցությունը աշխարհի կառուցմանը:
 - Աշխարհում, որտեղ կյանքն այնքան լավ է միաձուված կյանքին, որտեղ ծաղիկները քանու հոսանքի մեջ խառնվում են ծաղիկներին, որտեղ կարապը ճանաչում է բոլոր կարապներին, միայն մարդն է, որ պատնեշում է իրեն...
...Մի երեխա, ծոծրակը պատիհ հենած, լուր լաց է լինում: Նրանից իմ հիշողության մեջ կմնա միայն հավերժ անմիտքար մի սիրուն երեխայի հիշատակը: Ես օտար եմ: Ես ոչինչ չգիտեմ: Ես մուտք չեն գործում նրա Աշխարհը:

Αυτοίς δο Σαντ Σεκερόγι